Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

А. С. Пушкин

Путешествие в Арзрум

1937
Госиздат

Ա.Ս.ՊՈՒՇԿԻՆ

891.71
Պ-90

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԶՐՈՒՄ

Ա 22679

1937

—ԵՐԵՎԱՆ—

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՐՍՊԻ ԱՐՁՐՈՒՄ 1829 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՇԱՎԱՆԴԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նորերս ձեռքս ընկավ անցյալ 1834 թվականին Փարիզում տպված մի գիրք, որի անունն էր Voyages en Orient entrepris par ordre du Gouvernement François [1].

Հեղինակն իր ձեռով նկարագրելով 1829 թվականի արշավանքը, իր դատողությունները վերջացնում է հետևյալ խոսքերով։—Un poëte distinguè par son imagination a trouvé dans tout de hauts faits dont il a été temoin, non le sujet d'un poëme, mais celui d'une satyre.[2]

Թուրքական արշավանքում յեղած բանաստեղծներից յես գիտեի միայն Ա. Ս. Պուշկինի և Ա. Ն. Մուրավյովի մասին։ Ցերկուսն էլ գտնվում էին կոմս Դիբիչի բանակում։ Առաջինն, այն ժամանակ գրեց մի քանի գեղեցիկ լիրիկական վոտանավոր, յերկրորդը կազմում էր իր ճանապարհորդությունը դեպի սուրբ վայրերը, որոն այնքան ուժեղ տպավորություն գործեց։ Բայց յես չեմ կարդացել և վոչ մի սատիրա Արզրումի արշավանքի մասին։

Վոչ մի կերպ յես չեյի կարող մտածել, վոր այստեղ խոսքն իմ մասին է, յեթե նույն այդ գրքում յես չյտնեյի իմ անունը՝ առանձին Կովկասյան կորպուսի գեներալների անունների շարքում։

Parmi les chefs qui la commandoient (l'armée du Prince Paskèwitch) on distinguoit le Ge'nèral Mouravief·· le Prince Georgien Tsitsevaze... le Prince Armenien Beboutof .. le Prince Potemkine, le Céne'ral Raiewsky, et enfin— M. Pouchkine ... qui avoit quitte' la capitale pour chanter les exploits de ses compatriotes [3]:

Խոստովանում եմ,—ֆրանսական ճանապարհորդի այս տողերը, չնայած գովասանական ածականներին, ինձ համար շատ ավելի անախորժ եյին, քան ռուսական ժուրնալների հայհոյանքը։ Վոգեվորությունն փնsrելը ինձ միշտ ծիծաղելի և անհեթեթ քմահաճույք է թվացել.—վոգևորությունը չես գտնի· նա ինքը պետք է գտնի բանաստեղծին։ Գալ պատերազմ՝ գալիք սխրագործությունները գովերգելու նպատակով, ինձ համար կլիներ մի կողմից չափազանց ինք-

---

1/ <Ճանապարհորդություններ դեպի Արևելք, ձեռնարկված ֆրանսական կառավարության հանձնարարությամբ>։

2/ <Հարուստ յերևակայությամբ ոժտված մի պոետ, այն փառավոր գործերում, վոր նրան վիճակված էր դիտել, դտել էր սյուժետ վոչ պոեմի, այլ սատիրայի համար>։

3/ <Նրա (իշխան Պասկևիչի բանակի) հրամանատարների շարքում աչքի յեն ընկնում գեներալ Մուրավյովը·· Վրացի իշխան Ճիցիանովը... Հայ իշխան Բեհբութովը . իշխան Պոտյոմկինը, գեներալ Ռայևսկին և վերջապես Պուշկինը··· վորը թողել էր մայրաքաղաքը, վորպեսզի յերգի իր հայրենակիցների սխրագործությունները>։

նասիրական, մյուս կողմից չափազանց անվայել մի բան։ Ցեռ չեմ մի-ջամտում ռազմական դատողություններին։ Դա իմ գործը չէ։ Մի դուցե Սո-ղանլուի բարձունքներով խնդախորեն անցնելը, վորով կոմս Պասկևիչը սե-բասկիերին կտրեց Ոսման-փաշայից, մեկ որ ու դիշերվա ընթացքում թշնամու յերկու կորպուսներին պարտություն հասցնելը, նրա արագ արշավանքը դեպի Արզրում, այս բոլորը, վոր լիակատար հաջողությամբ պսակվեց, մի դուցե, և չափազանց արժանի յե ծաղրանքի զինվորական մարդկանց աչքում (վորպիսիք են, որինակի համար, պ. առևտրական հյուպատոս Ֆոնտանյեն, Ճանապար-հորդություն դեպի Արևելքի հեղինակ).—բայց յես կամաչելի սատիրաներ գրել մեծահռչակ մի զորավարի մասին, վոր սիրալիր ընդունեց ինձ իր վրանի հովանու տակ և իր մեծամեծ հոգսերի մեջ ժամանակ եր գտնում ցուցաբե-բելու դեպի ինձ հաճելի ուշադրություն։ Այն մարդը, վոր ուժեղների հով-նավորության կարիքը չունի, բարձր և գնահատում նրանց սիրալիրությունն ու հյուրասիրությունը, վորովհետև նրանցից ուրիշ բան չի եկ կարող պահանջել։ Մեղադրանքն անշնորհակալության մեջ չպիտի մնա առանց առարկության, վորպես աննշան քննադատություն, կամ դրական հայհոյանք։ Ահա ինչու յես վճռեցի տպել այս առաջաբանը և լույս ընծայել իմ ճամբորդական նոթերը, վորպես այն ամենը, ինչ յես գրել եմ 1829 թվականի արշավանքի մասին։

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Տափաստանները։ Կալմիկական վրան։ Կովկասյան Ջրեր։ Ռազմա-վիրական ճանապարհ։ Վլադիկավկազ։ Ոսկան թաղումը։ Թերեք։ Դարիալի կիրճը։ Ջյունտպատ լեռներով անցնելը։ Առաջին հայացք Վրաստանի վրա։ Ջրանցքներ։ Խոզրով-Միրզան։ Դուշեթի քաղաքապետը։

...Մոսկվայից յես գնացի Կալուգայի, Բելևի և Որյոլի վրայով, և այդպիսով անցա ավելորդ յերկու հարյուր վերստ, դրա փոխարեն տեսա ...—ին [Յերմոլովին]։

[Նա ապրում է Որյոլում, վորի մոտ գտնվում է նրա դյուղը։ Յես յեկա նրա մոտ առավոտյան ժամը 8-ին և նրան տանը չգտա։ Իմ կառապանն ինձ ասաց, վոր Յերմոլովը վոչ վոքի մոտ չի լինում, բացի իր հորից, վորը մի պարզ, աստվածասեր ծերունի յե, վոր նա վոչ թե մենակ քաղաքի աստիճանավորներին է ընդունում, այլ նա մատչելի յե ամենքի համար։ Մի ժամից հետո յես նորից յեկա նրա մոտ։ Յերմոլովը ինձ ընդունեց իր սովորական սիրալիրությամբ։ Առաջին հայացքից յես ամենափոքր նմանություն անգամ չգտա նրա և նրա պատկերների միջև, վորոնք սովորաբար նկարված են պրոֆիլով։ Յերեսը կլոր, կրակոտ, գորշ աչքեր, ալեզարդ մազերը ցից-ցից։ Վագրի գլուխ հերկուլեսյան իրանի վրա։ Ժպիտն անախորժ է, վորովհետև անբնական է։ Իսկ յերբ մտասուզվում է և խոժոռվում, նա գեղեցկանում է և զարմանալի հիշեցնում է Դովի նկարած բանաստեղծական պատկերը։ Նա չերքեզի կանաչ չեքմեն եր հագած։ Նրա առանձնասենյակի պատերի վրա կախված եյին թրեր և դաշույններ՝ հիշատակներ Կովկասում կառավարչապետ յեղած ժամանակից։ Նա իր անգործությունն ըստ յերևույթին անհամբերությամբ է տանում։ Մի քանի անգամ նա սկսեց խոսել

Պասկևիչի մասին և միշտ կծու խոսելով նրա հպարտությունների հիշողության մասին, նա նրան համեմատում էր Հեսու Նավիայի հետ, որի առաջ պատերը թափվում էին փողերի հնչյունից և Ցերևանյան կոմսին անվանում էր Ցերիքոնյան կոմս։ Թող հանդիպի նա, ասում էր Յերմոլովը, մի վոչ խելոք, վոչ հմուտ, բայց համառ փաշայի, որինակ այն փաշային, որ հրամանատար էր Շումլայում և Պասկևիչը կորած է։ Յես հաղորդեցի Ցերմոլովին կոմս Տոլստոյի խոսքերը, թե Պասկևիչն այնքան էր լավ գործում պարսկական կամպանիայում, որ խելոք մարդուն կը մնար միայն ավելի վատ գործել, նրանից տարբերվելու համար։ Ցերմոլովը ծիծաղեց, բայց չհամաձայնեց։ Կարելի չեր խնայել մարդկանց և ծախսերը, ասաց նա։ Կարծեմ նա գրում է կամ ուզում է գրել իր հիշողությունները։ Նա զժգոհ է Կարամզինի պատմությունից, և կկամենար, որ մի բոցավառ գրիչ նը-կարագրեր, թե ինչպես ռուս ժողովուրդը վոչնչությունից հասել է փառքի ու հզորության։ Իշխան Կուրբսկու գրառումների մասին խոսում էր նա con amore [1])։ Գերմանացիներին լավ տեսել է։ Մի հիսուն տարուց հետո, ասաց նա, այնպես կկարծեն, թե ներկա արշավանքին մասնակցել է սրուսական կամ ավստրիական ոժանդակ մի բանակ, այս և այս գերմանական գեներալների հրամանատարությամբ։ Յես նրա մոտ մնացի յերկու ժամ։ Նրան տհաճություն էր պատճառում, որ չեր հիշում իմ լրիվ անունը։ Նա ներողություն խնդրեց կոմպլիմենտներ ասելով։ Մի քանի անգամ խոսք բացվեց գրականության մասին։ Գրիբոյեդովի վոտանավորների մասին նա ասում է, որ նրանց ընթերցումը ցավեցնում է ընթերցողի այտոսկրները։ Կառավարության և քաղաքականության մասին վոչ մի խոսք չեղավ]։

Իմ ճանապարհը Կուրսկի և Խարկովի վրայով էր,—բայց յես շուտ տվի ուղիղ դեպի Թիֆլիսի ճանապարհը, զոհելով մի լավ ճաշ Կուրսկի պանդոկում (որ աննշան բան չե մեր ճանապարհորդությունների ժամանակ) և չհետաքրքրվելով այցելել ...[Խարկովի համալսարանը, որ չարժե Կուրսկի ճաշարանին]։ Մինչև Ցելեց ճանապարհները սարսափելի յեն։ Մի քանի անգամ իմ կառքը խրվեց ցեխի մեջ, որը համարժեք է Ոդեսսայի ցեխին։ Պատահում էր, որ մեկ որ ու գիշեր յես անցնում եյի

[1]) <հրապուրանքով>։

վոչ ավելի, քան հիսուն վերստ։ Վերջապես յես տեսա Վորոնեժյան տափաստանները և ազատ սլացա կանաչ դաշտավայրով։ Նովոչերկասկում գտա յես կոմս Պ[ուշկինին], վոր նույնպես գնում եր Թիֆլիս, և մենք համաձայնեցինք միասին ճանապարհորդել։

Ցեվլոպայից Ասիա անցնելը ժամ առ ժամ ավելի զգալի յե դառնում։—անտառներն անհետանում են, բլուրները հարթվում. խոտն ավելի խիտ և դառնում և ցույց է տալիս աճեցողության ավելի մեծ ույժ, յերևում են թռչուններ, վորոնք անհայտ են մեր անտառներում, արծիվները նստած են մեծ ճանապարհը նշող հողակույտերի վրա, ասես պահակներ լինեն և հպարտ նայում են ճանապարհորդներին. կալմիկները տեղավորված են կայարանի խրճիթների մոտ։ Նրանց վրաններին մոտ արածում են նրանց անճոռնի, բրդոտ ձիերը, վորոնք ձեզ ծանոթ են Որլովսկու գեղեցիկ նկարներից։

Մոտ որերս յես այցելեցի մի կալմիկական վրան (հյուսած ցանկապատ, վրան սպիտակ թաղիք քաշած)։ Ամբողջ ընտանիքը պատրաստվում եր նախաճաշելու։ Կաթսան յեփվում եր մեջտեղում, և ծուխը դուրս եր գալիս վրանի վերևում բացված անցքից։ Մի ջահել կալմիկուհի, բավականին սիրունադեմ, կար եր անում, ծխելով ծխախոտ։ Յես նստեցի նրա մոտ։

Անունդ ինչ է։— ...Բանի՞ տարեկան ես։—Տաս և ութ։—Ի՞նչ ես կարում։—Վարտիք։—Ո՞ւմ համար։—Ինձ համար։—Նա տվեց ինձ իր ծխամորճն ու սկսեց նախաճաշել։ Կաթսայում յեփվում եր թեյ վոչխարի ճարպով ու աղով։ Նա առաջարկեց ինձ նաև իր փարչը։ Յես չեմ ուզում հրաժարվել, և խմեցի մեկ շնչով։ Ջեմ կարծում, թե ժողովրդական մի այլ խոհանոց կարողանար արտադրել ավելի գարշելի բան։ Յես խնդրեցի մի բան վրայից ուտելու։ Ինձ տվին մի կտոր չորացրած գամբիկի միս. յես դրանից ել գոհ եյի։ Կալմիկական կոկետությունը վախեցրեց ինձ.—Յես շուտ դուրս յեկա վրանից և հեռացա տափաստանի Կիրկեյից։

Ստավրոպոլում յես տեսա յերկնքի ծայրին ամպեր, վորոնք ապշեցրել եյին իմ հայացքը ճիշտ ինչը տարի առաջ։ Նրանք ելի նույնն եյին, ելի նույն տեղում։ Կովկասյան շղթայի ձյունապատ գագաթներն եյին դրանք։

Գեորգիևսկից յես գնացի Տաք Ջրերը։ Այստեղ յես մեծ փոփոխություն գտա.—իմ ժամանակ վաննաները գտնվում եյին

շտապ շինված խղճուկ հյուղերում։ Աղբյուրները, որոնք մեծ մասամբ գտնվում էին իրենց նախնական վիճակում, խփում էին, ծխում էին և սարերից հոսում էին դանդաղ ուղղություններով, թողնելով իրենց յուրաքանչյուրից սպիտակ և կարմիր հետքեր։ Մենք յուրացող ջուրը վերցնում էինք կեղևից շինած փարչով կամ թե կոտրած շշի տակով։ Հիմա հիանալի վաննաներ և տներ են շինված։ Մաշուկի լանջին բուլվար է գցած, որի յեղերքը տնկված են լորենիներ։ Ամենուրեք՝ մաքուր ճանապարհներ, կանաչ նըստարաններ, կանոնավոր ծաղկանոցներ, փոքրիկ կամուրջներ, տաղավարներ։ Աղբյուրները պատած են քարով, վաննաների պատերին փակցված են վոստիկանության կանոնները։ Ամենուրեք կարգ ու կանոն, մաքրություն, գեղեցկություն...

Խոստովանում եմ, Կովկասյան ջրերը հիմա ավելի շատ հարմարություններ ունեն, բայց յես ափսոսում էի նրանց առաջվա վայրենի վիճակը, յես ափսոսում էի ժայռոտ գիրտ կածանները, թփուտներն ու չյանկապատած վիհերը, որոնց վրայով, յես, յերբեմն մագլցում էի։ Տխուր սրտով թողի յես ջրերը և վերադարձա Գեորգիևսկ։ Շուտով վրա հասավ գիշերը։ Չինջ յերկինքը ծածկվեց միլիոնավոր աստղերով։ Յես գնում էի Պոտկումոկի ափով։ Այստեղ էր, որ յերբեմն նստում էր ինձ հետ Ա. Ռ <այնսկին>, ականջ դնելով ջրերի մեղեդուն։ Վեհապանծ Բեշտուն հեռվում ավելի ու ավելի սև էր դծագրվում, շրջապատված լեռներով՝ իր վասալներով, և վերջապես անհետացավ խավարի մեջ...

Հետևյալ որը մենք շարունակելով ճանապարհը հասանք Յեկատերինոդրադ, որ մի ժամանակ փոխարքայանիստ քաղաք է յեղել։

Յեկատերինոդրադից սկսվում է ռազմավիրական ճանապարհը։ Փոստի ճանապարհը վերջանում է։ Ձիեր են վարձում մինչև Վլադիկավկազ։ Տրվում է կոզակների ու հետևակ պահակախումբ և մի թնդանոթ։ Փոստն ուղարկում են շաբաթը յերկու անգամ և ճանապարհորդները միանում են նրան.—դա կոչվում է ոկազիա։ Մենք յերկար չսպասեցինք։ Փոստը յեկավ հետևյալ որը, և յերբորդ առավոտը ժամը 9-ին մենք պատրաստ էինք ճանապարհ ընկնելու։ Հավաքատեղում միացավ ամբողջ քարավանը, որ բաղկացած էր 500 մարդուց կամ մոտ՝ այդքան։ Թմբուկ զարկեցին։ Մենք շարժվեցինք։ Առաջից գնաց թնդա-

նոթը, շրջապատված հետևակ զինվորներով։ Նրա յետևից ձգվեցին կառքերը, մի բերդից մյուսը տեղափոխվող զինվորների կանանց ծածկասայլերը, մեր հետևից ճոնչաց յերկանիվ սայլերի դումակը։ Յերկու կողմերից վազում եյին ձիերի յերամակներ և յեզների նախիրներ։ Նրանց մոտով արշավում եյին ուղեկցողները՝ յափնջիներով ու ողապարաններով։ Այդ բոլորն ինձ սկզբում շատ դուր եր գալիս, բայց շուտով ձանձրացրեց։ Թնդանոթը շարժվում եր քայլով, պատրույգը ծխում եր և զինվորները նրանով կպցնում եյին ծխամորճերը։ Մեր յերթի դանդաղությունը (առաջին որը մենք միայն 15 վերստ անցանք), անտանելի շոգը, պաշարի պակասությունը, անհանգիստ գիշերները, նոզայական սայլերի անընդհատ ճոնչոցը ինձ համբերությունից հանում եյին։ Թաթարները պարծենում են այդ ճոնչոցով, ասելով վոր նրանք գնում գալիս են վորպես աղնիվ մարդիկ, վորոնք թագնվելու կարիք չունեն։ Այս անգամ ինձ համար ավելի հաճելի կլիներ ճանապարհորդել վոչ այդքան պատվավոր հասարակության հետ։

Ճանապարհը բավական միատեսակ ե.—հարթավայր. շուրջը բլուրներ։ Յերկնքի ծայրում Կովկասի գագաթները, վոր որեցոր ավելի ու ավելի բարձր եյին յերևում։ Բերդերը, վորոնք բավարար են այս յերկրի համար, ունեն խրամատ, վորը մեզանից ամեն մեկը առաջվա ժամանակները թռչելով կանցներ առանց թափ առնելու, ժանգոտ թնդանոթներ, վոր չեն թնդացել Դուդովիչի ժամանակներից, փլած պատնեշ, վորի վրա թափառում ե հավերի ու սագերի կայազորը։ Բերդերում կան մի քանի խղճուկ հյուղեր, վորտեղ դժվարությամբ կարելի յե ճարել մի տասնյակ ձու և մածուն։

Առաջին նշանավոր տեղը՝ Մինարեթ բերդն ե։ Նրան մոտենալիս, մեր քարավանն անցնում եր սքանչելի հովիտով, գերեզմանաթումբերի միջով, վորոնք ծածկված եյին լորենիներով ու չինարներով։ Դրանք մի քանի հազար ժանտախտից մեռած մարդկանց գերեզմաններ եյին։ Յերևում եյին յերփներանգ ծաղիկներ, վոր բուսել եյին վարակված աճյուններից։ Աջ կողմում շողշողում եր ձյունապատ Կովկասը. առաջից բարձրանում եր մի անգին անտառապատ սար. նրա յետևումն եր գտնվում բերդը. նրա շուրջը յերևում եյին ավերված աուլի հետքեր, վոր կոչվելիս ե յեղել Տաշարուբ և մի ժամանակ գլխավորն ե

յեղել Մեծ Կաբարդայում։ Անհետացած գյուղի յերբեմնի գոյության մասին վկայում է թեթև, մենավոր մինարեթը, վորը գեղակազմ բարձրանում է քարակույտերի մ/ջից, ցամաքած հեղեղատի ափին։ Ներսի սանդուխքը դեռ չի քանդվել։ Ցեսբարձրացա նրանով հարթակի վրա, վորի վրայից այլևս չի հնչում մոլլայի ձայնը։ Այստեղ յես գտա մի քանի անհայտ անուններ, վոր աղյուսների վրա խզբզել եյին փառասեր ճանապարհորդները։

Մեր ճանապարհը գեղատեսիլ դարձավ։ Լեռները ձգվում եյին մեր վերևում։ Նրանց գագաթներին սողում եյին հաղիվ նշմարելի հոտեր, վորոնք միջատների եյին նմանում։ Մենք նշմարեցինք նաև հովվին, վոր մի գուցե և ռուս է՝ մի ժամանակ գերի ընկած և գերության մեջ ծերացած։ Մենք ելի գերեզմանաթումբերի, ելի ավերակների հանդիպեցինք։ Ցերկու-յերեք գերեզմանաքարեր կանգնած եյին ճանապարհի յեզրին։ Այնտեղ, ըստ չերքեզների սովորության, թաղված են նրանց ասպատակները։ Քարի վրա փորագրված թաթարական արձանագրությունը, թրի պատկերը, թանգան, մնացել են հափշտակիչ թռռներին, վորպես հիշատակ՝ հափշտակիչ նախնու մասին։

Չերքեզները մեզ ատում են։ Մենք քշել ենք նրանց լայնարձակ արոտատեղերից. նրանց աուլներն ավերված են, ամբողջ ցեղեր ընաջինջ յեղած։ Նրանք հետզհետե ավելի յեն հեռանում դեպի լեռների խորքերը և այնտեղից տարածում իրենց ասպատակությունները։ Խաղաղ չերքեզների բարեկամությունը անվստահելի յե. նրանք միշտ պատրաստ են ոգնելու իրենց վայրագ ցեղակիցներին։ Նրանց վայրենի ասպետության վոգին զգալիորեն ընկել է։ Նրանք հաղվադեպ են հարձակվում հավասար թվով կողակների վրա, յերբեք չեն հարձակվում հետեազորի վրա և փախչում են, յերբ թնդանոթներ են տեսնում։ Սակայն յերբեք առիթ չեն փախցնի հարձակվելու թույլ ջոկատի կամ անպաշտպանի վրա։ Այս կողմերում շատ լուրեր են պատում նրանց չարագործությունների մասին։ Համարյա թե վոչ մի հնար չկա նրանց զսպելու, մինչև վոր նրանց զինաթափ չանեն, ինչպես զինաթափ արին Ղրիմի թաթարներին, մի բան, վոր չափազանց դժվար է, նրանց մեջ տիրող ժառանգական գժտությունների և արյան վրիժառության պատճառով։ Փաշությունն ու թությը նրանց մարմնի անդամներն են, և մանուկն սկսում է տիրապետել նրանց ավելի առաջ, քան թոթովել։ Նը-

բանց համար սպանությունը—մարմնի հասարակ մի շարժում է։ Գերիներին նրանք պահում են փրկանքի հուսով, բայց սարսափելի անգութ են վարվում հետները, հարկադրում են աշխատել ուժից վեր, կերակրում են հում խմորով, ծեծում են, լերբ խելքներին փչում է, և նրանց մոտ պահակ են դնում իրենց տղաներին, վորոնք, մի խոսքի համար, իրավունք ունեն նրանց կոտորել իրենց մանկական թրերով։ Նորերս բռնել էին մի խաղաղ չերքեզի, վորը կրակել եր մի զինվորի վրա։ Նա արդարացել եր նրանով, վոր նրա հրացանը չափազանց յերկար եր լցված մնացել։ Ի՞նչ անես այդպիսի ժողովրդի հետ։ Սակայն պետք է հուսալ, վոր Սև ծովի արևելյան ափի գրավումը, կըտրելով չերքեզներին Թուրքիայի հետ առևտուր անելուց, կհարկադրի նրանց մերձենալ մեզ։ Ճոխության ազդեցությունը կարող է նպաստել նրանց սանձահարման. — սամովարը կարևոր նորամուծություն կլիներ։ Կա ավելի ուժեղ, ավելի բարոյական, մեր դարի լուսավորությանն ավելի համապատասխան միջոց՝ դա ավետարանի քարոզումն է։ Չերքեզները շատ ժամանակ չեն, վոր ընդունել են մահմեդական հավատը։ Նրանք հրապուրվել են Ղուրանի առաքյալների գործունյա ֆանատիզմով, վորոնցից աչքի ընկնողն է յեղել Մանսուրը, մի արտակարգ մարդ, վոր յերկար ժամանակ ապստամբեցրել է Կովկասը ռուսական տիրապետության դեմ, վերջում բռնվել է մեր կողմից և մեռել Սոլովեցկիյ վանքում։ Կովկասն սպասում է քրիստոնեական միսսիոներների։ Բայց մեր ծուլության համար ավելի հեշտ է կենդանի խոսքի փոխարեն մեռյալ տառեր ձուլել և համբ գրքեր ուղարկել գիր չճանաչող մարդկանց։

Մենք հասանք Վլադիկավկազ, նախկին Կափ-Կայա, լեռների նախադռանը։ Նա շրջապատված է ոսկան առլներով։ Ցեռ այցելեցի նրանցից մեկը և հանդիպեցի թաղման։ Խրճիթի մոտ խռնվել եր ժողովուրդը։ Բակում կանգնած եր մի սայլ, յերկու յեզ լծած։ Մեռյալի ազգականներն ու բարեկամները գալիս եյին ամեն կողմից և դառը լացով մտնում եյին խրճիթը, բռունցքներով զարկելով իրենց ճակատներին։ Կանայք կանգնած եյին հանդարտ։ Մեռյալին դուրս բերին յափնջու վրա,

...Like a warrior taking his rest
With his martial cloak around him.[1])

---

[1]) <Նա պառկած եր, փաթաթված իր մարտական թիկնոցի մեջ, վորպես հանգստացող զինվոր>։

դրին սայլին։ Հյուրերից մեկը վերցրեց հանգուցյալի հրացանը, փչեց վառոդարանից վառոդն ու դրեց դիակի կողքին։ Ցեղները շարժվեցին։ Հյուրերը գնացին յուրաքանչյուր։ Մարմինը պետք է թաղվեր լեռներում, առանց մի յերեսուն վերստ հեռավորության վրա։ Ավելորդ վոր վոչ վոք չկարողացավ բացատրել ինձ սույն ծեսերը։

Ոսերն ամենաաղքատ ցեղն են Կովկասում բնակվող ժողովուրդներից։ Նրանց կանայք հիանալի յեն և, ինչպես ասում են, շատ բարեհաճ են դեպի ճանապարհորդները։ Բերդի դարպասի մոտ յես պատահեցի յերկուսին, մի բանտարկյալ ոսի կնոջն, ու աղջկան։ Նրանք ճաշ եյին տանում նրա համար։ Նրանք հանդիստ ու համարձակ եյին թվում, սակայն, յերբ յես մոտեցա յերկուսն էլ խոնարհեցրին գլուխները և ծածկվեցին իրենց պատառոտված չադրաներով։ Բերդում յես տեսա չերքեզ ամանաթների՝ կայտառ և սիրուն տղաների։ Նրանք ամեն բոպե չարաճճիություններ են անում և փախչում են բերդից։ [Նրանց պահում են վողբալի վիճակում։ Նրանք մաս են դալիս ցնցոտիներում, կիսամերկ, և դարշելի կեղտոտության մեջ։ Վոմանց վրա յես տեսա փայտե վոտնակոճեր։ Հավանականորեն աղատ արձակված ամանաթները չեն ափսոսում իրենց Վլադիկավկազում դտնվելու համար]։

Թնդանոթը մեղանից բաժանվեց։ Մենք ճանապարհ ընկանք հետևազորի և կողակների հետ։ Կովկասը մեզ ընդունեց իր սըրբարանը։ Մենք լսեցինք խուլ աղմուկ և տեսանք Թերեքը, վոր հոսում եր զանազան ուղղություններով։ Մենք գնացինք նրա ձախ ափով։ Նրա աղմկալի ալիքները շարժում են շնաբույների նմանող ցածլիկ ոսական ջրաղացների անիվները։ Վորչափ խորանում եյինք մենք դեպի լեռները, այնքան ավելի նեղ եր դառնում կիրճը։ Սեղմված Թերեքը մռնչալով նետում է իր պղտոր ալիքները ժայռերի վրայով, վորոնք փակում են նրա ճանապարհը։ Կիրճը գալարվում է նրա հոսանքի յերկայնությամբ։ Լեռների քարե ստորոտները հղկված են նրա ալիքներից։ Ցեսը գնում եյի վոտով և ամեն բոպե կանգ եյի առնում, ապշած՝ բնության մռայլ սքանչելիքից։ Ցեղանակը մառախլապատ եր, ամպերը ծանր շարժվում եյին սև դագաթների մոտով։ Կոմս Պ <ուշկինը> և Շ <երնվայլը>, նայելով Թերեքին մտաբերում

եյին Իմատրան և գերադասությունը տալիս եյին Հյուսիսում վառոտացող գեսին։ Բայց յես վոչ մի բանի հետ համեմատել չեյի կարողանում իմ առաջ բացված տեսարանը։

Լարս չհասած, յես յետ մնացի պահակախմբից, աչքերս սևեռած այն վիթխարի ժայռին, վորոնց միջով զարկվում եր Թերեքը անմեկնելի կատաղությամբ։ Հանկարծ դեպի ինձ ե վազում մի զինվոր, հեռվից կոչելով.—Մի կանգնեք, Ձ (եռդ) Բ (առեծքնություն), կսպասեն։ Այդ նախազգուշացումը անսովոր լինելով, չափազանց տարորինակ թվաց ինձ։ Բանն այն ե, վոր ոս ավազակները, այս նեղ տեղում անվտանգ զգալով, Թերեքի այն կողմից կրակում են ճանապարհորդների վրա։ Մեր անցնելու նախընթացորը, նրանք այդ ձևով հարձակվել եյին գեներալ Բեկովիչի վրա, վորը քշել անցել եր նրանց կրակոցների միջով։ Ժայռի վրա ինչ վոր ամրոցի ավերակներ են յերևում.—նրանք շրջածածված են խաղաղ ոսերի հյուղերով, վորոնք կարծես ծիծեռնակի բույներ լինեն։

Լարսում մենք կանգ առանք գիշերելու։ Այստեղ մենք հանդիպեցինք մի ֆրանսիացի ճանապարհորդի, վորը վախեցրեց մեզ առաջիկա ճանապարհով։ Նա մեզ խորհուրդ եր տալիս թողնել կառքերը Կոբիում և ձիով գնալ։ Նրա հետ մենք առաջին անգամ խմեցինք Կախեթի գինի դարշահոտ տկնորից, հիշելով Իլիականի խնջույքները.—

(Ցեվ այծի տիկերում գինին, սփոփանքը մեր)

Այստեղ դատ յես «Կովկասյան գերու» մի կեղտոտված արտագրությունը, վորը, խոստովանում եմ, վերստին կարդացի մեծ հաճույքով։ Այդ բոլորը թույլ ե, դեռահաս, թերատ, բայց շատ բան կռահված ե և արտահայտված ե ճիշտ։

Հետևյալ որն առավոտյան մեկնեցինք։ Թուրք գերիները կարգի եյին բերում ճանապարհը։ Նրանք գանգատվում եյին իրենց տրվող կերակուրից։ Վոչ մի կերպ չեյին կարողանում ընտելանալ ռուսական սև հացին։ Այդ հիշեցրեց ինձ իմ բարեկամ Շ-ի խոսքերը, յերբ նա վերադարձել եր Փարիզից.—«Վատ ե, յեղբայր, Փարիզում ապրելը—ուտելու բան չկա. սև հաց չեմ ճարի»։

Լարսից յոթ վերստ հեռու գտնվում ե Դարիալի պոստը։ Կիրճը նույն անունն ե կրում։ Ժայռերը յերկու կողմից կանգնած են զուգահեռ պատերի նման։ Այստեղ այնքան նեղ ե, այն-

Ա 22679
47245

քան նեղ, գրում է մի ճանապարհորդ, վոր վոչ միայն տեսնում ես, այլ կարծես թե զգում ես անձկությունը։

Ցերկնքի մի կտորը ժապավենի նման կապտին է տալիս մեր գլխավերևը։ Լեռան բարձունքից մանր ու ցայտող շիթերով թափվող առուները հիշեցնում էին ինձ Ռեմբրանդի տարորինակ նկարը՝ Գանիմեդի հափշտակումը։ Ի դեպ, կիրճն էլ լուսավորված է միանգամայն նրա ճաշակով։ Տեղ-տեղ Թերեքը վողողում է ժայռերի բուն ստորոտը, և ճանապարհի վրա, վորպես ամբարտակ, կիտված են քարեր։ Պոստից վոչ հեռու դետի վրայով խիղախորեն ձգած է մի փոքրիկ կամուրջ։ Վրան կանգնում ես, կարծես ջրաղացի վրա յես։ Կամուրջը ամբողջությամբ ցնցվում է, իսկ Թերեքն աղմկում է, ջրաղացաքարը շարժող անիվների նման։ Դարիալի դիմաց սեպ ժայռի վրա յերևում են ամրոցի ավերակներ։ Ավանդությունն ասում է, վոր այնտեղ թագնված է յեղել ինչ վոր Դարիա թագուհի, վորը տվել է իր անունը կիրճին.—հեքիաթ է։ Դարիալ հին պարսից լեզվով նշանակում է դարպաս։ Պլինիոսի վկայությամբ, Կովկասի դուռն, վոր սխալաբար Կասպից է կոչվել, այստեղ է յեղել։ Կիրճը փակված է յեղել փայտե յերկաթապատ իսկական դարպասով։ Նրա տակից, գրում է Պլինիոսը, հոսում է Դիրիոդորիս գետը։ Այստեղ էլ կառուցված է յեղել ամրոցը՝ վայրենի ցեղերի հարձակումներին դիմադրելու համար։ Տեսնք կոմս Ի. Պոտոցկու ճանապարհորդությունը, վորի դիտական հետախուզումները նույնքան հետաքրքրական են, վորքան և իսպանական ռոմանները։

Դարիալից մենք ճանապարհվեցինք դեպի Կազբեկ։ Մենք տեսանք Տրոիցկի դարպասը (մի կամար, վոր գոյացել է ժայռի մեջ վառոդի պայթյունից)—նրա տակով մի ժամանակ անցնում եր ճանապարհը, իսկ այժմ հոսում է իր հունը հաճախ փոխող Թերեքը։

Կազբեկ գյուղից վոչ հեռու մենք անցանք կաթաղի հեղեղատը, մի ձորակ, վորը մեծ անձրևների ժամանակ կատաղի գետ է դառնում։ Այդ ժամանակ նա բոլորովին ցամաքած եր և մեծահռչակ եր միայն իր անունով։ Կազբեկ գյուղը գտնվում է Կազբեկ լեռան ստորոտում ու պատկանում է Իշխան Կազբեկին։ Իշխանը մոտ քառասուն հինգ տարեկան մի տղամարդ է, հասակով պրեսբրաժենսկի ֆլիգելմանից ավելի բարձր։ Մենք նրան

գտանք գուքանում (այդպես են կոչվում վրացական ճաշակրպակները, որոնք շատ ավելի աղքատ են և վոչ ավելի մաքուր, քան ռուսականները)։

Դռան մոտ ընկած եր մի հաստափոր տկճոր (յեղան տիկ), իր չորս վոտները չռած։ Հսկան նրանից դինի եր ծծում և մի քանի հարց տվեց ինձ, որոնց յես պատասխանեցի նրա կոչումին ու հասակին վայել հարգանքով։ Մենք բաժանվեցինք որպես լավ բարեկամներ։

Շուտ են բթանում տպավորությունները։ Հաղիվ անցավ մի որ և արդեն Թբիլիսի մունչոյն ու նրա այլանդակ ջրվեժները, ժայռերն ու անդունդներն այլևս չեյին գրավում իմ ուշադրությունը։ Ինձ սկսեց տիրել բացառապես Թիֆլիս հասնելու անհամբերությունը։ Յես նույնքան անտարբեր եյի անցնում Կազբեկի մոտով, որպես յերբեմն լողում եյի Զատրդաղի մոտով։ Ճշմարիտ ե և այն, որ անձրևային ու մառախլապատ յեղանակը խանգարում եր ինձ տեսնելու նրա ձյունե շեղջը, որն, ըստ բանաստեղծի արտահայտության, հեռարաց ե յերկնակամարի։

Սպասում եյին պարսից արքայազնին։ Կազբեկից վորոշ տարածության վրա հանդիպեցին մեզ մի քանի կառքեր և դրժվարացրին նեղ ճանապարհը։ Մինչև կառքերը իրար մոտով կանցնեյին, շահակախմբի սպան հայտնեց մեզ, որ նա ուղեկցում ե պարսից պալատական բանաստեղծին, և իմ ցանկությամբ ներկայացրեց ինձ Ֆաղիլ-Խանին։ Յես թարգմանի ոգնությամբ, դիմեցի նրան արևելյան վերամբարձ վողջույնի խոսքով, բայց որքան ամաչեցի, երբ Ֆաղիլ-Խանը իմ անտեղի խեղկատակությանը պատասխանեց կարգին մարդուն հատուկ պարզ, խելացի քաղաքավարությամբ։ «Նա հույս ուներ ինձ տեսնելու Պետերբուրգում։ Նա ցավում եր, որ մեր ծանոթությունը լինելու յե վոչ յերկարատև և այլն»։ Ամոթով յես ստիպված եյի թողնել իմ փքված—կատակային տոնը և անցնել սովորական յեվրոպական փրազների։ Ահա մի դաս մեր ռուսական ծաղրասիրության համար։ Այսուհետև յես չեմ դատի մարդու մասին նրա վոչխարի փափախով [1]) և ներկած յեղունգներով։

Կորի պոստը գտնվում ե Կրեստովայա լեռան հենց ստորոտում, որի վրայով մենք պիտի անցնեյինք։ Մենք այստեղ կանգ առանք գիշերելու համար և սկսեցինք մտածել, թե ինչ-

---

1) Այդպես են կոչվում պարսկական գդակները։

պես կատարենք այդ սոսկալի սխրագործությունը. — արդյո՞ք թողնելով կառքերը, կողակների ձիերը նստենք, թե ուղարկենք ոսերի յեղների յետեից։ Համենայն դեպս յես մեր ամբողջ քարավանի կողմից պաշտոնական խնդիրք գրեցի Գ Զ***-ին <Զիլյայելին>, որն այս կողմերի պետն է, և մենք պառկեցինք քնելու սպասելով սայլերին։

Մյուս որը ժամը մոտ 12-ին մենք լսեցինք աղմուկ, աղաղակներ, և տեսանք մի արտասովոր տեսարան. — 18 դույզ լղար. փոքրահասակ յեզներ, մի խումբ կիսամերկ ոսերի հարվածների տակ, հաղիվ հաղ քաշում եյին իմ բարեկամ Ռ-ի թեթև վիենական կառքը։ Այդ տեսարանն իսկույն ցրեց իմ բոլոր տարակուսանքները։ Յես վճռեցի իմ ծանր պետերբուրգյան կառքը յետ ուղարկել Վլադիկավկազ և ձիով գնալ Թիֆլիս։ Կոմս Պ <ուշկինը> չեր ուզում հետևել իմ որինակին։ Նա գերադասեց յեզների մի ամբողջ նախիր լծել իր բրիչկային (կիսակառքը), որը բեռնված եր ամեն տեսակի պաշարներով և հանդիսավոր կերպով անցնել ձյունապատ լեռնաշղթան։ Մենք բաժանվեցինք և յես գնացի գնդապետ Ոգ <արյովի> հետ, որը հետախուզում եր այստեղի ճանապարհները։

Ճանապարհը գնում եր փլվածքի վրայով, որը տեղի յերունեցել 1827 թվի հունիսի վերջին։ Այդպիսի դեպքեր պատահում են սովորաբար յուրաքանչյուր յոթ տարին մեկ։ Թարի մի ահագին գուդա վայր գլորվելով, լցրել եր կիրճը մի ամբողջ վերստ տարածությամբ և կտրել եր Թերեքը։ Ներքևը կանգնած պահակները լսել եյին սոսկալի դղրդյուն և տեսել եյին, որ գետն արագորեն բարակել է և մի քառորդ ժամում բոլորովին հանդարտվել է ու սպառվել։ Թերեքը դուրս եր յեկել փլվածքի միջով վոչ առաջ, քան յերկու ժամից հետո։ Այդ պատճառով եր նա այդքան ահռելի յե յեղել։

Մենք դիք բարձրանում եյինք ավելի ու ավելի վեր։ Մեր ձիերը խրվում եյին փխրուն ձյունի մեջ, որի տակ աղմկում եյին վտակները։ Յես զարմանքով եյի նայում ճանապարհին և չեյի ըմբռնում անիվներով գնալու հնարավորությունը։

Այդ ժամանակ յես լսեցի խուլ վորոտ։ «Դա փլվածք է»,— ասաց ինձ պ. Ոգ <արյովը>։ Յես յետ նայեցի և տեսա այն կողմում մի ձյունակույտ, որը պոկվելով դանդաղորեն իջնում եր գառիվայրից։ Փոքր փլվածքները այստեղ հաղվադեպ չեն։ Անցյալ տարի մի ռուս սայլապան անցնելիս և յեղել Կրեստովայա-

լեռնով։ Փլվածքը պոկվել է. սոսկալի ճնշումը ընկել է նրա ոտքերի վրա, կլանել է սայլը. ձին ու գեղջուկին, գլորվել է ճանապարհի մյուս կողմը և իր ավարի հետ միասին թավալվել է դեպի անդունդը։ Մենք հասանք սարի գագաթին։ Այստեղ դրված է գրանիտե խաչ, մի հին հուշարձան, որը վերանորոգել է Ցերմոլովը։

Այստեղ ճանապարհորդները սովորաբար իջնում են կառքերից և գնում են ոտքով։ Նրերս այստեղից անցել է մի ինչ որ ոտաբերկրացի հյուպատոս.—նա այնքան թույլ է յեղել, որ պատվիրել է իր աչքերը կապել, նրան տարել են թևից բռնած, և յերբ հանել են նրա աչքի կապոցը, այն ժամանակ նա ծունկ է չոքել, զոհություն է հայտնել աստծուն և այլն, որ շատ զարմացրել է ուղեկցողներին։

Վայրկենական անցումը ահավոր Կովկասից դեպի գեղատեսիլ Վրաստանը հիանալի յեր։ Հարավի ողը հանկարծ սկսում է մեղմորեն փչել ճանապարհորդի վրա։ Գուտ սարի բարձունքից բացվում է Կայշաուրի հովիտը իր մարդաբնակ ժայռերով, իր այգիներով, իր հստակ Արագվայով, որը վոլորվում է, որպես արծաթե ժապավեն,—և այս բոլորը փոքրացրած ձևով, յերբեք վերստանոց անդունդի հատակում, որի յեզրով անցնում է վտանգավոր ճանապարհը։

Մենք իջնում եյինք դեպի հովիտը։ Նորալուսինը յերևաց պարզ յերկնքում։ Ցերեկոյան ողը մեղմ եր և տաք։ Ցես գիշերեցի Արագվայի ափին, Գ. Զ <իլյայեվի> տանը։ Մյուս որը յես հրաժեշտ տվի սիրալիր տանտիրոջ ու շարունակեցի ճանապարհը։

Այստեղ սկսվում է Վրաստանը։ Զվարթ Արագվայով վազող պայծառ հովիտները փոխարինեցին մռայլ կիրճերին և ահեղ թերեքին։ Մերկ քարափների փոխարեն յես տեսա իմ շուրջը կանաչ լեռներ և պտղատու ծառեր։ Ջրանցքները ապացուցում եյին կրթվածության առկայությունը։ Նրանցից մեկն ինձ զարմացրեց տեսողության պատրանքի կատարելությամբ,—ջուրը, կարծես հոսում է սարի վրայով վարից դեպի վեր։

Փասանաուրում յես կանգնեցի ձիերը փոխելու համար։ Այստեղ յես հանդիպեցի մի ռուս սպայի, որն ուղեկցում եր պարսից արքայազնին։ Շուտով յես լսեցի զանգակների ձայն, և մեկը մյուսին կապած և ասիական ձևով բեռնված, ղաթարների (ջորիների) մի ամբողջ շարան ձգվեց ճանապարհի վրա։ Ցես

գնացի վոտով, չսպասելով ձիերին։ Անանուրից կես վերստ հեռու, ճանապարհի պտույտում հանդիպեցի Խոզրով-Միրզային։ Նրա կառքերը կանգնած էին։ Ինքը դուրս նայեց իր կառքից և գլխով արավ ինձ։ Մեր հանդիպումից մի քանի ժամ հետո, արքայազնի վրա հարձակվել էին լեռնցիները։ Լսելով գնդակների սուլոցը, Խոզրովը դուրս եր ցատկել իր կառքից, նստել եր ձին ու փախել։ Նրա հետ յեղած ռուսները զարմացել են նրա համարձակության վրա։ Բանն այն է, վոր կառքին անսովոր յերիտասարդ ասիացին համարել է կառքը ավելի շուտ ծուղակ, քան թե ապաստարան։

Ցես հասա Անանուր, առանց հոգնածություն զգալու։ Իմ ձիերը չէին յեկել։ Ինձ ասացին, վոր մինչև Դուշեթ քաղաքը մնացել է վոչ ավել, քան տասը վերստ, և յես դարձյալ գնացի վոտով։ Բայց յես չգիտեյի, վոր ճանապարհը սարն ի վեր է գնում։ Այդ տասը վերստը արժեցին ամբողջ քսան վերստ։

Վրա հասավ յերեկոն. յես առաջ եյի գնում, բարձրանալով ավելի ու ավելի վեր։ Ճանապարհից մոլորվել անկարելի յեր՝ բայց տեղ-տեղ աղբյուրներից գոյացած կավոտ ցեխը հասնում եր մինչև ծնկներս։ Ցես բոլորովին հոգնեցի։ Մութն ավելացավ։ Ցես լսում եյի շների վոռնոց ու հաչոց, և ուրախանում եյի, յերևակայելով, վոր քաղաքը հեռու չէ։ Բայց սխալվում եյի.— հաչում եյին վրացի հովիվների շները, իսկ վոռնում եյին չախակալները, վոր այնտեղ սովորական են։ Ցես անիծում եյի իմ անհամբերությունը, բայց էլ ճար չկար։ Վերջապես տեսա յես լույսեր և կես գիշերին՝ տ արդեն կանգնած եյի ծառերի ստվերով պատած տների մոտ։ Հաչին պատահած մարդը հանձն առավ ուղեկցելու ինձ քաղաքապետի մոտ և դրա համար ինձնից պահանջեց մեկ աբասի։

Իմ յերևալը քաղաքապետի մոտ, վորը մի վրացի հին սպա յեր, մեծ ազդեցություն գործեց։ Ցես պահանջում եյի առաջինը —սենյակ, վորտեղ կարողանայի հանվել, յերկրորդը՝ մի բաժակ գինի, յերրորդը՝ մի աբասի իմ ուղեկցողի համար։ Քաղաքապետը չգիտեր, ինչպես ինձ ընդունի, և նայում եր ինձ վրա տարակուսանքով։ Տեսնելով, վոր նա չի շտապում կատարելու իմ խնդիրքները, յես սկսեցի նրա մոտ հանվել, ներողություն խնդրելով de la liberte' grande [1]։

[1] <այդպիսի մեծ ազատության համար>։

Բարեբախտաբար, յես գտա գրպանումս իմ ճանապարհորդական վկայականը, որն ապացուցում եր, որ յես խաղաղ ճանապարհորդ եմ, և ոչ թե Ռինալդո Ռինալդինի։ Որհնյալ հրովարտակն ունեցավ անմիջապես իր ազդեցությունը։ Ինձ սենյակ հատկացվեց, մի բաժակ գինի բերվեց, և աբասին տրվեց իմ ուղեկցողին, հայրական հանդիմանությամբ, հանդերձ նրան վրացական հյուրասիրությունը վիրավորող շահասիրության համար։ Ցեսնեռվեցի բազմոցի վրա, հուսալով իմ սխրագործությունից հետո քնել դյուցազնական քնով.—բայց չեղավ այդ՝ լուերը, որոնք չախկալներից շատ ավելի վտանգավոր են, հարձակվեցին վրաս և ամբողջ գիշերն ինձ հանգիստ չտվին։ Առավոտյան յեկավ մոտս իմ ծառան և հայտնեց, որ կոմս Պ<ուշկինը> բարեհաջող կերպով յեղներով անցել և ձյունապատ սարերը և ժամանել Դուշեթ։ Պետք եր շտապել։ Կոմս Պ<ուշկինը> և Շ<երնվալը> այցելեցին ինձ և առաջարկեցին դարձյալ միասին ճանապարհ ընկնել։ Ցեսթողի Դուշեթն այն հաճելի մտքով, որ գիշերելու յեմ Թիֆլիսում։

Ճանապարհը նույնչափ հաճելի յեր և գեղատեսիլ, թեև հաղվադեպ եյինք մենք տեսնում ազգաբնակության հետքեր։ Գարցիսկալայից մի քանի վերստ այն կողմը մենք անցանք Քուռը, հռովմեական արշավանքների ժամանակներից մնացած հնաղարյան կամուրջով և խոշոր վարդով, իսկ յերբեմն էլ չափ զցելով ձիերը քշեցինք դեպի Թիֆլիս, ուր և հասանք աննկատելի կերպով յերեկոյան ժամի մոտ 11-ին։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Թիֆլիս։ Ժողովրդական բաղանիք։ Անքիթ Հասանը։ Վրացական բարքերը։ Յերդեր։ Կախեթի գինին։ Շոգերի պատճառը։ Թանգություն։ Քաղաքի նկարագրությունը։ Թիֆլիսից մեկնելը։ Վրացական դիշերը։ Հայաստանի տեսքը։ Կրկնակի չվերթ։ Հայկական գյուղ՝ Գյառդյառ։ Գրիբոյեդովը։ Բզովդալ։ Հանքայլն աղբյուր։ Մբրիկ լեռներում։ Գիշերում Գումրիում։ Արարատ։ Սահման։ Թուրքական հյուրասիրություն։ Կարս։ Հայ ընտանիք։ Կարսից մեկնելը։ Կոմս Պասկևիչի ճամբարը։

Յես իջա պանդոկում, մյուս որը գնացի Թիֆլիսի հրաշակավոր բաղանիքը։ Քաղաքն ինձ մարդաշատ թվաց։ Ասիական շինություններն ու բազարը հիշեցնում եյին ինձ Քիշինևը։ Նեղ ու ծուռ փողոցներով վազում եյին քթոցներով բեռնված եշեր, յեղներով լծված սայլերը բռնել եյին ճանապարհը։ Հայեր, վրացիներ, չերքեզներ, պարսիկներ խռնվել եյին անկանոն հրապարակի վրա։ Նրանց միջև շրջադայում եյին յերիտասարդ ռուս սատիճանավորներ Ղարաբաղի հովատակներ հեծած։ Բաղանիքի մուտքի մոտ նստած եր բաղնիք պահողը՝ մի ծեր պարսիկ։ Նա բաց արեց իմ առաջ դուռը, յես ներս մտա մի լայնարձակ սենյակ և ի՞նչ տեսա։ Հիսունից ավելի կին, ջահել և պառավ, կիսահագնված կամ բոլորովին չհագնված, նստած ու կանգնած հանվում եյին, հագնվում եյին պատերի մոտ դրված նստարանների վրա։ Յես կանգ առա։ Գնանք, գնանք, ասաց ինձ տերը, այսոր յերեքշաբթի յե.—կանանց որն է։ Վոչինչ, հոգ չե։ Ի հարկե հոգ չե, պատասխանեցի յես նրան, ընդհակառակը։ Տղամարդկանց յերեսալը վոչ մի տպավորություն չգործեց։ Նրանք շարունակում եյին ծիծաղել և իրար հետ խոսել։ Վոչ

մեկը չշտապեց ծածկվել իր չադրայով, վոչ մեկը չդադարեց հանվելուց։ Կարծես թե յես անբևույթ եյի. շատերը նրանցից իսկապես չքնաղ եյին և արդարացնում եյին Թ. Մուրի յերևակայությունը՝

a lovely Georgian maid,
With all the bloom, the freshened glow
of her own country maiden's looks·
When warm they rise from Teflis brooks·
Lalla Rookh [1])

բայց և յես չդիտեմ ավելի գարշելի բան, քան վրացի պառավները.—դրանք վհուկներ են։

Պարսիկը ներս տարավ ինձ բաղանիքը.—տաք յերկաթածծմբային աղբյուրը թափվում եր ժայռի մեջ փորված խոր ավազանի մեջ. Կյանքումս, վոչ Ռուսաստանում, վոչ ել Թուրքիայում չեմ հանդիպել յես մի այլ ավելի շքեղ բանի, քան Թիֆլիսի բաղանիքները։ Նկարագրեմ դրանց ավելի մանրամասնորեն։

Տերը թողեց ինձ Թյուրք բաղնիսպանի խնամքին։ Յես պետք է խոստովանեմ, վոր նա անքիթ եր.—դա չեր խանգարում նրան իր գործին վարպետ լինելու։ Հասանը (այդպես եր կոչվում անքիթ Թյուրքը) սկսեց նրանից, վոր պառկեցրեց ինձ տաք քարե հատակի վրա, և ապա սկսեց տրորել մարմինս, ձգել հոդերս, ամուր խփել ինձ բռունցքներով։ Յես չեյի զգում նվազագույն ցավ անգամ, այլ զարմանալի թեթևություն։ (Ասիական բաղնիապանները (քիսաչիները) յերբեմն վոգևորվում են, ցատկում են ձեր ուսերին, սահում են վոտներով ձեր աղդրերի վրայով և մեջքիդ վրա պպղած պարում են, e sempre bene) [2])։ Սրանից հետո նա ինձ յերկար տրորում եր բրդյա թաթմանով (քիսայով) և ուժգնությամբ տաք ջուրը վրաս տալով. սկսեց լըվանալ սապոնած քաթանի փամփուշտով։ Մի անբացատրելի զգացում ե.—ձեր վրա տաք սապոնը թափվում ե, վորպես ոդ։ N· B.—բրդե թաթմանն ու քաթանի փամփուշտն անպատճառ պետք է ընդունվեն ռուսական բաղանիքում.—գիտակները շնորհակալ կլինեն այդպիսի նորմուծության համար։

---

1) <Մի չքնաղ վրացուհի կույս, այտերի այնպիսի գույներով ու զով տապով, վորպիսին լինում ե նրա յերկրի կույսերի մոտ, յերբ նրանք չիկացած գուրս են գալիս Թիֆլիսի Ջերմուկներից։ Լալլա-Ռուխ>։

2) <և մշտ լավ>։

Փամփուշտից հետո Հասանը թույլատրեց ինձ ավազանը մտնել, դռնանով եւ վերջացավ արարողությունը։

Թիֆլիսում յես հույս ունեյի գտնել Ռ <այսկուն>, բայց իմանալով, վոր նրա դունդն արդեն յելել է արշավանքի, յես վճռեցի կոմս Պասկեվիչից թույլտվություն խնդրել՝ բանակը դնալու։

Թիֆլիսում մնացի յես մոտ յերկու շաբաթ և ծանոթացա այնտեղի հասարակության հետ։ Ս <անկովսկին> Թիֆլիսի Տեղեկագրի հրատարակիչը, ինձ շատ հետաքրքրական բաներ պատմեց այս յերկրի մասին, ի <շխան> Ցիցիանովի մասին, Ա. Պ. Յերմոլովի մասին և այլն. Ս <անկովսկին> սիրում է Վրաստանը և նրա համար վայելուն ապագա յե նախատեսում։

Վրաստանը ապավինեց Ռուսաստանի հովանավորությանը 1783 թ., բայց այդ չխանգարեց հռչակավոր Աղա-Մոհամեդին վերցնել ու ավերել Թիֆլիսը և 20000 գերի տանել (1795)։ Վրաստանը անցավ Ալեքսանդր կայսրի գայիսոնի տակ 1802-ին Վրացիները ռազմասեր ժողովուրդ են։ Նրանք ապացուցեցին իրենց քաջությունը մեր դրոշակների տակ։ Նրանց մտավոր ընդունակությունները սպասում են մեծ կրթվածության։ Նրանք առհասարակ ուրախ և սրտաբաց բնավորություն ունեն։ Տոներին տղամարդիկ խմում են և զբոսնում փողոցներում։ Սեաչյա տղաները յերգում են, թռչկոտում, գլխկոնձի յեն տալիս։ Կանայք լեզգինկա յեն պարում։

Վրացական յերգերի յեղանակը դուրեկան է։ Ինձ թարգմանեցին նրանցից մեկը բառ առ բառ։ Նա կարծեմ, հորինված է նորագույն ժամանակներս։ Նրա մեջ ինչ վոր արևելյան անհեթեթություն կա, վորն ունի իր բանաստեղծական արժանիքը։

Ահա նա։—

Հոգի, վոր նոր ես ծնվել զրախտում, հոգի, վոր ստեղծված ես իմ յերջանկության համար։ Քեզանից եմ, ով անմահ, սպասում յես կյանք։
Քեզանից, ով գարուն ծաղկավետ, քեզանից, ով լուսնյակ յերկշաբաթյա, քեզանից, իմ պահապան հրեշտակ, քեզանից եմ սպասում յես կյանք։
Դու փայլում ես գեմքով և ուրախացնում ես ժպիտով։ Ձեմ ուզում ալխարհին սիրապետել. ուզում եմ քո հայացքը։
Քեզանից եմ սպասում յես կյանք։
Սարի վարդ, ցողով թարմացած, բնության ընտրյալ սիրելի,
Մեղմ, թաղված դանձ, քեզանից եմ սպասում յես կյանք։

Վրացիք մեզ նման չեն խմում և զարմանալիորեն դիմացկուն են։ Նրանց գինիները չեն դիմանում արտահանման և շուտ փչանում են, իսկ տեղում նրանք հիանալի յեն։ Կախեթի և Ղարաբաղի գինիները արժեն մի քանի բուրգոնյան գինիների։ Գինին պահում են մառաններում, հողում թաղված ահագին կարասներում։ Դրանք բացում են հանդիսավոր ծեսերով։ Նորերս մի ռուս դրագուն, գաղտնի բաց անելով մի այդտեսակ կարաս, ընկնում և մեջն ու խեղդվում է Կախեթի գինու մեջ, ինչպես դժբախտ Կլարենսը մալագայի տակառում։

Թիֆլիսը գտնվում է Բուռի ափերին, քարքարոտ լեռներով շրջապատված հովտում։ Սրանք պաշտպանում են նրան բոլոր կողմերից քամիներից և, շիկանալով արևից, վոչ թե տաքացնում, այլ յեռացնում են անշարժ ոդը։ Ահա Թիֆլիսում տիրող անտանելի շոգերի պատճառը, չնայած, վոր քաղաքը միայն լայնության 41 աստիճանի վրա յե։ Հենց նրա անունը (Տբիլիս-քաղաք) նշանակում է տաք քաղաք։

Քաղաքի մեծ մասը շինված է ասիական ձևով.—տները ցածր են, կտուրները տափակ։ Հյուսիսային մասում բարձրանում են յևրոպական ճարտարապետության տներ, և նրանց մոտ սկսում են գոյանալ կանոնավոր հրապարակներ։ Շուկան բաժանվում է մի քանի շարքերի։ Խանութները լի յեն թուրքական և պարսկական ապրանքներով, բավականին եժան են, յեթե նկատի առնենք ընդհանուր թանգությունը։ Թիֆլիսի զենքը թանգ է գնահատվում վոչ Արևելքում։ Կոմս Ս <ամոյլով> ը և վ., վորոնք այստեղ դյուցազների հռչակ են ստացել, սովորաբար փորձել են իրենց նոր թրերը մի հարվածով բաժանելով վոչխարը յերկու մասի կամ կտրելով յեղան գլուխը։

Թիֆլիսում ազգաբնակության մեծ մասը կազմում են հայերը—1825 թվին նրանք այստեղ մինչև 2500 ընտանիք են յեղել։ Այժմյան պատերազմների ժամանակ նրանց թիվը ավելի մեծացել է։ Վրացի ընտանիքներ հաշվում են մոտ 1500։ Ռուսներն իրենց այստեղի բնակիչ չեն համարում։ Զինվորականներն ապրում են Վրաստանում, կատարելով իրանց պարտքը, վորովհետև նրանց այդպես է հրամայված։ Յերիտասարդ տիտուլյար խորհրդականները գալիս են այստեղ ասեսորի աստիճանի համար, վոր այնքան փափագելի յե։ Թե մեկը և թե մյուսները Վրաստանի վրա նայում են, վորպես աքսորավայրի վրա։

Թիֆլիսի կլիման, ասում են, անառողջ է։ Այստեղի տենդերը սարսափելի են. այն բուժում են անդիկով, վորի գործածությունն անվնաս է շոգերի պատճառով։ Բժիշկները նրանով կերակրում են իրենց հիվանդներին առանց վորևե խղճի։ Գեներալ Ս <իպյագինը>, ասում են, մեռել է նրանից, վոր նրա տնային բժիշկը, վորը յեկել եր նրա հետ Պետերբուրգից, վախեցել եր տեղական բժիշկների առաջարկած դեղաքանակից և չեր տվել այն հիվանդին։ Այստեղի ջերմերը նման են Ղրիմի և Մոլդավիայի ջերմերին և միատեսակ են բուժվում։

Բնակիչները խմում են Քուռի պղտոր, բայց դուրեկան ջուրը։ Բոլոր աղբյուրների և ջրհորների ջուրը ուժգին ծծումբի համ ունի։ Թեև այստեղ գինին այնչափ ընդհանուր գործածության մեջ է, վոր ջրի պակասը նկատելի չեր լինի։

Թիֆլիսում ինձ զարմացրեց փողի եժանությունը։ Յերկու փողոց միայն անցնելով կառքով և բաց թողնելով նրան կես ժամից հետո, յես պետք է վճարեյի յերկու ռուբլի արծաթով։ Յես առաջ կարծում եյի, թե նա ուզում եր ոգտվել նորեկի անգիտությունից, բայց ինձ ասացին, վոր գինը ճիշտ այդքան է։ Մյուս բոլոր բաները թանգ են նույն համեմատությամբ։

Մենք գնացինք գերմանական գաղութը և այնտեղ ճաշեցինք։ Խմեցինք այնտեղ պատրաստվող գարեջուր, վոր շատ անդուրեկան համ ունի և վճարեցինք շատ թանգ շատ վատ ճաշի համար։ Իմ պանդոկում ինձ նույնպես կերակրում եյին թանգ և վատ։ Գեներալ Ս <տրեկալով>ը, վոր հայտնի գաստրոնոմ է, մի անգամ ինձ հրավիրեց ճաշի. դժբախտաբար նրա մոտ կերակուրները մատուցում եյին ըստ աստիճանների, իսկ սեղանի շուրջը նստել եյին անգլիական սպաներ, գեներալների ուսադիրներով։ Սպասավորները մատուցելիս այնպիսի ջանասիրությամբ ինձ բաց եյին թողնում, վոր յես սեղանից վեր կացա քաղցած։ Սատանան տանի Թիֆլիսի գաստրոնոմին։

Յես անհամբերությամբ սպասում եյի, վոր վիճակս վորոշվի։ Վերջապես Ռ <այնվսկուց> նամակ ստացա։ Նա ինձ գրում եր, վոր յես շտապեմ դալի Կարս, վորովհետև մի քանի որից զորքը պիտի առաջ շարժվեր։ Յես հենց հետևյալ որը ճանապարհ ընկա։

Յես գնում եյի ձիով. փոխելով ձիերը կողակների պոստերում։ Շուրջս գետինը խանձված եր տոթից։ Վրացական գյու-

ղերը հեռվից ինձ գեղեցիկ այգիներ էին թվում, իսկ մոտենալով նրանց, յես տեսնում էի մի քանի աղքատ խրճիթներ ծածկված փոշոտ բարդիների հովանու տակ։ Արևը մայր մտավ, բայց ոդը դեռ խեղդող էր.—

Գիշերներ տոր,
Ասպղեր ոսար...

Լուսինը փայլում էր. ամեն ինչ խաղաղ էր։ Միմիայն ձիուս դոփյունն էր լսվում գիշերային լռության մեջ։ Յես յերկար գնում էի, չ՝անդիպելով բնակության նշույլների։ Վերջապես տեսա առանձնացած մի խրճիթ։ Սկսեցի բաղխել դուռը։ Դուրս յեկավ տերը, Յես ջուր խնդրեցի, նախ ռուսերեն, ապա թուրքերեն։ Նա ինձ չհասկացավ։ Զարմանալի անհոգություն։ Թիֆլիսից յերեսուն վերստի վրա, Պարսկաստանի և Թուրքիայի ճանապարհին, նա վոչ մի խոսք չգիտեր վոչ ռուսերեն, վոչ էլ թուրքերեն։

Գիշերն անցկացնելով կողակների պոստում, յես լուսաբացին շարունակեցի ճանապարհս։ Ճանապարհս անցնում էր սարերով և անտառով։ Յես հանդիպեցի ճանապարհորդ թյուրքերի. նրանց մեջ կային մի քանի կանայք։ Նրանք նստած էին ձիերի վրա, փաթաթված չադրայով. միայն յերևում էին նրանց աչքերն ու կրունկները։

Յես սկսեցի բարձրանալ Բզովդալը, այն սարը, վորը բաժանում է Վրաստանը հին Հայաստանից։ Ծառերով հովանավորված լայն ճանապարհը վոլորապտույտ անցնում է սարի մոտով։ Բզովդալի գագաթին յես անցա մի փոքր կիրճով, վորը, կարծեմ, Գայլի դուռ է կոչվում և արդեն գտնվում էի Վրաստանի բնական սահմանի մոտ։ Իմ առաջ բացվեցին նոր սարեր, նոր հորիզոն. վոտներիս տակ փռված էին բուսավետ, կանաչ արտեր։ Յես մի անգամ ել նայեցի արևից խանձված Վրաստանի վրա և սկսեցի վայր իջնել սարի թեթև զառիվայր լանջով դեպի Հայաստանի թարմ դաշտավայրերը։ Աննկարագրելի հաճույքով յես նկատեցի, վոր տոթը հանկարծ մեղմացավ. կլիման արդեն ուրիշ էր։

Ծառաս բեռնակիր ձիերի հետ ինձանից յետ մնաց։ Յես գընում էի մենակ ծաղկափթիթ անապատով, վոր հեռվից շրջապատված էր սարերով։ Ցրվածության պատճառով յես այն պոստի մոտով անցա, ուր պետք է ձիերը փոխեի։ Անցավ

ավելի քան վեց ժամ և յես սկսեցի զարմանալ, թե ինչու յերկարեց ճանապարհը։ Յես տեսա մի կողմում քարակույտեր, վորոնք նման եյին հյուղերի և գնացի նրանց մոտ։ Պարզվեց, վոր իսկապես յես յեկել եյի մի հայկական գյուղ։

Մի քանի կին, խայտաբղետ ցնցոտիներ հագներին նստած եյին գետնափոր խրճիթի տափակ կտրին։ Յես մի կերպ բացատրվեցի։ Նրանցից մեկն իջավ խրճիթը և բերեց ինձ համար պանիր ու կաթ։ Մի քանի բոպե հանգստանալով, յես առաջ գնացի և դիմացս, գետի բարձր ափին տեսա Գյառգյառ բերդը։ Յերեք վտակ աղմուկով ու փրփրած վայր եյին թափվում բարձր ափից։ Յես անցա գետը։ Յերկու յեզ, սայլին լծած բարձրանում եյին զգուշության ճանապարհով։ Մի քանի վրացի ուղեկցում եյին սայլը։ Վորտեղից եք գալիս դուք, հարցրի յես նրանց.— Թեհրանից։— Ի՞նչ եք տանում։— Գրիբոյեդին։ Դա սպանված Գրիբոյեդովի մարմինն եր, վոր փոխադրում եյին Թիֆլիս։

Յես չեյի կարծում, թե յերբևիցե կհանդիպեմ մեր Գրիբոյեդովին։ Յես բաժանվեցի նրանից անցյալ տարի, Պետերբուրգում, նրա Պարսկաստան գնալուց առաջ։ Նա տխուր եր և տարորինակ նախազգացումներ ուներ։ Յես սկսեցի նրան հանգստացնել. նա ինձ ասաց.— Vous ne connaissez pas ces gens là vous verrez, qu'il faudra jouer des couteaux [1]։ Նա կարծում եր, թե արյունահեղության պատճառը կլինի շահի մահը և նրա յոթանասուն վորդիների միջև ծագած յերկպառակությունը։ Սակայն զառամած շահը դեռ կենդանի յե, իսկ Գրիբոյեդովի մարգարեական խոսքերը իրականացան։ Նա ընկավ պարսիկների դաշույնների, վորպես տգիտության և նենգության զոհ։ Նրա այլանդակված դիակը, վոր յերեք որ Թեհրանի ամբոխի խաղալիքն և յեղել, կարելի յեր յեղել ճանաչել միայն ձեռքից, վորը մի ժամանակ ծակված և յեղել ատրճանակի գնդակով։

Յես Գրիբոյեդովի հետ ծանոթացա 1817 թվին։ Նրա մելանխոլիկ բնավորությունը, նրա զայրացած խելքը, նրա բարեհոգությունը, բոլոր նրա թուլություններն ու արատները, վորոնք մարդկության անխուսափելի ուղեկիցներն են,— ամեն ինչ նրա մեջ արտասովոր գրավչություն ուներ։ Ի ծնե ունենալով փառասիրություն, վոր համապատասխանում եր իր ձիրքերին,

[1]) <Դուք դեռ չգիտեք այդ մարդկանց·—դուք կտեսնեք, վոր բանը կհասնի դանակների>։

նա յերկար ժամանակ մնացել եր մանր կարիքների և անհայտության ցանցերով պատած։ Պետական մարդու ընդունակությունները մնացել եյին առանց գործադրության։ Բանաստեղծական տաղանդը ճանաչված չեր. մինչև իսկ նրա սառն ու փայլուն քաջությունը վորոշ ժամանակ մնացել եր կասկածանքի տակ։ Մի քանի բարեկամներ միայն գիտեյին նրա գինը և տեսել եյին անվստահության այն ժպիտը, այն հիմար, անտանելի ժպիտը,— յերբ նրանք առիթ եյին ունեցել խոսելու նրա մասին, վորպես մի արտակարգ մարդու մասին։ Մարդիկ հավատում են միայն փառքին և չեն հասկանում, վոր իրանց մեջ կարող է գտնվել մի վորևե Նապոլեոն, վոր չի առաջնորդել և վոչ մի յեգերական վաշտ, կամ մի այլ Դեկարտ, վոր չի տպագրել վոչ մի տող Մոսկովսկի Տելեգրաֆում։ Սակայն դեպի փառքը տածած մեր հարգանքը ծագում է գուցե ինքնասիրությունից.— Փառքի կաղմի մեջ չէ՞ վոր մտնում է և մեր ձայնը։

Գրիբոյեդովի կյանքը մթագնած եր վորոշ ամպերով.— հետևանք՝ բորբոք կրքերի և հզոր հանգամանքների։ Նա անհրաժեշտություն զգաց մի անգամ ընդմիշտ հաշիվ տեսնել իր յերիտասարդության հետ և կտրուկ շուռ տալ իր կյանքը։ Նա հրաժեշտ տվեց Պետերբուրգին և անհոգ ցրվածությանը, գնաց Վրաստան, ուր մնաց ութ տարի, նվիրված իր մեկուսացած անխոնջ պարապմունքներին։ Նրա Մոսկվա վերադառնալը 1824 թվին հեղաշրջում եր նրա վիճակի մեջ և սկիզբ անընդհատ հաջողությունների։ Նրա «Խելքից պատուհաս» ձեռագիր կոմեդիան աննկարագրելի ազդեցություն գործեց և մի անգամից նրան դասեց մեր առաջնակարգ բանաստեղծների շարքը։ Մի վորոշ ժամանակ անց, նրա կատարելապես ծանոթ լինելն այն յերկրին, վորտեղ սկսվում եր պատերազմը, նոր ասպարեզ բացեց նրա առաջ։ Նա նշանակված եր դեսպան։ Գալով Վրաստան, նա ամուսնացավ նրա հետ, վորին սիրում եր... յես չգիտեմ ավելի նախանձելի մի բան, քան նրա փոթորկալից կյանքի վերջին տարիները։ Նույնիսկ խիղախ անհավասար կռվում վրա հասած մահը, Գրիբոյեդովի համար չեր յեղել սարսափելի ու տանջալի մի բան։ Այն վայրկենական է յեղել և սքանչելի։

Վորքան ցավալի յե, վոր Գրիբոյեդովը չի թողել իր հուշագրերը։ Նրա կենսագրությունը գրելը նրա բարեկամների գործը պետք է լինի։ Սակայն նշանավոր մարդիկ մեզ մոտ անհետանում են, հետք չթողնելով իրենցից հետո։ Մենք ծույլ ենք և չհետաքրքրվող։

Գյառդյառում յես հանդիպեցի Բ <ուտուրլինին>, վորը, ինչպես և յես, գնում եր բանակը։ Բ <ուտուրլինը> ճանապարհորդում եր բազմապիսի հարմարություններով։ Յես ճաշեցի նրա մոտ կարծես Պետերբուրգում։ Մենք վճռեցինք ճանապարհորդել միասին, սակայն անհամբերության դեվը նորից տիրեց ինձ։ Ծառաս ինձնից թույլտվություն խնդրեց հանգստանալու։ Յես ուղեվորվեցի մենակ, նույնիսկ առանց ուղեկցողի։ Ճանապարհը միշտ նույնն եր և միանգամայն անվտանգ։ Անցնելով վոչ բարձր մի սար և իջնելով ծառերով ծածկված հովիտը, յես տեսա մի հանքային աղբյուր, վոր հոսում եր ճանապարհի լայնքով։ Այստեղ յես հանդիպեցի մի հայ տերտերի, վորը գնում եր Յերևանից Ախալցխա։ Ի՞նչ նոր բան կա Յերևանում,— հարցրի յես նրանից։—Յերևանում ժանտախտ է,—պատասխանեց նա։—Իսկ ի՞նչ լուր կա Ախալցխայի մասին։—Ախալցխայում ժանտախտ է, պատասխանեցի յես նրան։ Փոխանակելով սույն հաճելի լուրերը, մենք բաժանվեցինք։

Յես գնում եյի բերրի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով։ Հունձը ծորում եր, սպասելով մանգաղի։ Յես հիանում եյի այս սքանչելի հողով, վորի բերրիությունը արևվելքում առած է դարձել։ Իրիկնադեմին յես հասա Պարնիքյոյ։ Այստեղ կողակների պոստ կար։ Ուրյադնիկը փոթորիկ եր նախագուշակում և ինձ խորհուրդ եր տալիս մնալ գիշերելու։ Բայց յես ուզում եյի անպատճառ նույն որը հասնել Գումրի։

Յես պետք է անցնեյի վոչ բարձր սարերով, վորոնք Կարսի Փաշալիկի բնական սահմանն եյին կազմում։ Յերկինքը ծածկված եր ամպերով, յես հույս ունեյի, վոր ժամեժամ ուժեղացող քամին նրանց կցրի։ Բայց անձրևն սկսեց կաթկաթել և գնալով ավելի խոշորեց ու խտացավ։ Պարնիքյոյից մինչև Գումրի 27 վերստ են հաշվում։ Յես ամրացրի յափունջուս փոկերը, հագա բաշլուղս գլխարկիս վրայից և ինձ հանձնեցի նախախնամությանը։

Անցավ ավելի քան յերկու ժամ։ Անձրևը չեր դադարում։ Ջուրը շռշռալով թափվում եր ծանրացած յափունջուս և անձրևից հագեցած բաշլուղիս վրայից։ Վերջապես սառը շիթն սկսեց թափանցել փողպատիս տակով և շուտով անձրևը թրջեց ինձ մինչև վերջին թելը։ Գիշերը մութն եր. կողակը գնում եր առաջիցս, ցույց տալով ճանապարհը։ Մենք սկսեցինք բարձրա-

նալ դեպի սարերը։ Այդ միջոցին անձրևը դադարեց և ամպերը ցրվեցին։ Մինչև Գումրի մնում էր մոտ տաս վերստ։ Բամին իրեն ապատ զգալով, այնքան ուժեղ էր փչում, որ քառորդ ժամում ինձ բոլորովին չորացրեց։ Ցես չեյի կարծում, թե կխուսափեմ տենդախտից։

Վերջապես մոտ կես գիշերին հասա Գումրի։ Կողակն ուղղակի ինձ բերեց պոստը։ Մենք կանգ առանք վրանի մոտ, ուր շտապում եյի յես մտնել։ Այստեղ յես գտա տասներկու կողակ, կողք կողքի քնած։ Ինձ տեղ տվին։ Ցես հոգնածությունից ինքս ինձ կորցրած ընկա յափունջուս վրա։ Այդ որը յես անցել եյի 75 վերստ։ Ցես քնեցի մեռածի պես։

Կողակները ինձ զարթեցրին արշալույսին։ Իմ առաջին մտքն էր.—արդյո՞ք ջերմով չեմ բռնված։ Սակայն զգացի, որ փառք աստծո զվարթ եմ, առողջ. վոչ միայն հիվանդության, այլև հոգնածության հետք չկար։ Ցես դուրս յեկա վրանից՝ առավոտյան թարմ ոդ ծծելու։ Արևը ծագում էր։ Պարզ յերկնքի վրա սպիտակին էր տալիս ձյունապատ, յերկզլխանի մի սար։ Ի՞նչ սար է,—հարցրի յես ճվակոտալով և լսեցի պատասխան,—դա Արարատն է։ Վորքան զորավոր է հնչյունների ներգործությունը։ Ագահաբար նայում եյի յես բիբլիական սարին, տեսնում եյի տապանը, որ կանգ էր առել նրա գագաթին նորոգման և կյանքի հուսով—և դուրս թռչող ագռավն ու աղավնին, պատժի և հաշտության սիմվոլներին...

Ձիս պատրաստ էր։ Ճանապարհ ընկանք ուղեկցողիս հետ։ Առավոտը հիանալի յեր։ Արևը փայլում էր։ Մենք գնում եյինք լայն մարգագետինով, ցողով ու յերեկվա անձրևի կաթիլներով վոռոգված խիտ կանաչ խոտի վրայով։ Մեր առաջ փայլում էր մի գետակ, որը մենք պետք է անցնեյինք։ Ահա և Արփաչայը,—ասաց ինձ կողակը։ Արփաչայը, մեր սահմա՛նը։ Դա արժեր Արարատին։ Ցես սուրացի դեպի գետը մի անմեկնելի զգացմունքով։ Դեռ յերբեք ոտար յերկիր յես չեյի տեսել։ Սահմանն ինձ համար ինչ որ խորհրդավոր բան էր։ Դեռ մանկության որերից ճանապարհորդությունն իմ սիրած յերազանքն է յեղել։ Հետագայում յես յերկար ժամանակ աստանդական կյանք եմ վարել, թափառելով մերթ Հարավում, մերթ Հյուսիսում, և դեռ յերբեք անծայրածիր Ռուսաստանի սահմաններից դուրս չեյի

ցնկել։ Ցես ուրախությամբ մտա նվիրական գետը և լավ ձիս դուրս հանեց ինձ թուրքական ափը։ Սակայն այդ ափն արդեն նվաճված եր.—յես դարձյալ գտնվում եյի Ռուսաստանում։

Մինչև կարս ինձ մնում եր ևս 75 վերստ։ Իրիկնադեմին յես հույս ունեյի տեսնելու մեր ճամբարը։ Ցես վոչ մի տեղ կանգ չեյի առնում։ Կես ճանապարհին, սարերի մեջ, գետակի ափին շինած մի հայկական գյուղում ճաշի փոխարեն կեբա յես անիծյալ չյուրեկը՝ այն ըլիթանման, մոխրի հետ կիսախառն թըխած հայկական հացը, վորին այնքան կարոտում եյին թուրք գերիները Դարիալի կիրճում։ Մեծ գին կտայի յես մի կտոր ռուսական սև հացի համար, վորը նրանց այնքան անախորժ եր։ Ինձ ուղեկցում եր մի յերիտասարդ թուրք, վոր սարսափելի շատախոս եր։ Նա ամբողջ ճանապարհը շատախոսում եր թուրքերեն, չհոգալով այն մասին, թե արդյոք հասկանում եմ յես նրան թե վոչ։ Ցես լարում եյի ուշադրությունս ու աշխատում եյի հասկանալ նրան։ Թվում եր, թե նա մի թեթև հայհոյում եր ռուսներին, սովոր լինելով նրանց բոլորին տեսնել համազգեստով, ինձ իմ հագուստիս պատճառով ոտարերկրացու տեղ եր ընդունում։ Մենք հանդիպեցինք մի ռուս սպայի։ Նա գալիս եր մեր ճամբարից և ինձ հայտնեց, վոր բանակն արդեն Կարսից առաջ է շարժվել։ Չեմ կարող նկարագրել իմ հուսահատությունը. այն միտքը, վոր յես ստիպված պիտի լինեմ վերադառնալ Թիֆլիս, ամայի Հայաստանում դուր տեղը չարչարվելուց հետո, բոլորովին սպանում եր ինձ։ Սպան գնաց իր ճանապարհով։ Թուրքը նորից սկսեց իր մենախոսությունը, բայց յես արդեն ականջ չեյի դնում նրան։ Ցես ձիուս յորդան փոխեցի խոշոր վարգի և յերեկոյան հասա մի թուրքական գյուղ, վորը գտնվում եր Կարսից 20 վերստ հեռավորության վրա։

Վայր ցատկելով ձիուց, յես ուզում եյի մտնել հենց առաջին խրճիթը, բայց դռանը յերևաց տերը և հայհոյանքով յես հրեց ինձ։ Ցես նրա վողջույնին պատասխանեցի մտրակով։ Թուրքը սկսեց գոռգոռալ, մարդիկ հավաքվեցին։ Իմ ուղեկցողը, կարծեմ, ինձ պաշտպան կանգնեց։ Ինձ ցույց տվին քարվանսարան։ Յես նստեց մտա մի մեծ գոմանման խրճիթ. տեղ չկար վոր յափնջիս կարողանայի փռել։ Ցես սկսեցի ձի պահանջել։ Մոտս լեկավ թուրք տանուտերը։ Նրա բոլոր անհասկանալի խոսքերին, յես մի բան եյի պատասխանում.—վեր բանա տր (տուր

ինձ ձի)։ Թուրքերը չեյին համաձայնվում։ Վերջապես գլխի ընկա նրանց փող ցույց տալու (դրանից եվ հարկավոր եր սկսել)։ Ջին իսկույն բերին և ինձ տվին ուղեկցող։

Ցես գնացի լայն հովիտով, վորը շրջապատված եր սարերով։ Շուտով յես տեսա Կարսը, վորը սպիտակին եր տալիս սարերից մեկի վրա։ Իմ թուրքը ցույց եր տալիս ինձ այն, կրկնելով՝ Կարս, Կարս և չափ եր գցում իր ձին։ Ցես հետևում եյի նրան, տանջվելով անհանգստությունից.—վիճակս պետք է վորոշվեր Կարսում։ Այստեղ յես պիտի իմանայի, թե վորտեղ է գտնվում մեր ճամբարը, և թե հնարավորություն կունենամ արդյոք հասնելու բանակին։ Այդ միջոցին յերկինքը ծածկվեց ամպերով և նորից տեղաց անձրև, բայց յես այդ մասին այլևս չեյի հոգում։

Մենք մտանք Կարս։ Պարսպի դռանը մոտենալիս, յես լսեցի ռուսական թմբուկի ձայնը—զարկում եյին այգանվագ։ Պահակն ընդունեց ինձնից իմ տոմսը և գնաց պարետի մոտ։ Ցես անձրևի տակ կանգնած մնացի մոտ կես ժամ։ Վերջապես ինձ ներս թողին։ Ցես պատվիրեցի ուղեկցողիս, վոր ուղիղ ինձ բաղանիք տանի։ Մենք գնացինք ծուռ, զառիթափ փողոցներով. ձիերը սայթաքում եյին թուրքական վատ մայթի վրա։ Կանգ առանք մի բավականին վատ տեսք ունեցող տան առաջ։ Այդ բաղանիքն եր։ Թուրքը իջավ ձիուց և սկսեց բախել դուռը։ Վոչ վոք չեր պատասխանում։ Անձրևը շռշռալով թափվում եր վրան։ Վերջապես մոտիկ տնից դուրս յեկավ մի յերիտասարդ հայ և բանակցելով թուրքիս հետ, կանչեց ինձ իր մոտ, խոսելով բավական մաքուր ռուսերեն։ Նա ինձ նեղ սանդուխքով տարավ իր տան յերկրորդ մասը։ Ցածր բաղկաթոռներով և հին գորգերով կահավորված սենյակում նստած եր մի պառավ կին, նրա մայրը։ Նա մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռը։ Վորդին պատվիրեց նրան կրակ անել ու ինձ համար ընթրիք պատրաստել։ Ցես հանվեցի ու նստեցի կրակի մոտ։ Ներս մտավ տանտիրոջ փոքր յեղբայրը, մոտ տասնյոթ տարեկան տղա։ Յերկու յեղբայրն էլ յեղել եյին Թիֆլիս և այնտեղ ապրել մի քանի ամիս։ Նրանք ինձ ասացին, վոր մեր գորքերը առաջ են շարժվել նախընթաց որը և վոր մեր ճամբարը գտնվում է Կարսից 25 վերստ հեռու։ Ցես բոլորովին հանգստացա։ Շուտով պառավը ինձ համար պատրաստեց վոչխարի մի սոխով, վորն ինձ խո-

հարարական արվեստի գագաթնակետը թվաց։ Մենք բոլորս պառկեցինք միևնույն սենյակում։ Յես պառկեցի մարվող բուխարու դիմաց և քնեցի այն հաճելի հուսով, որ մյուս որը պիտի տեսնեմ կոմս Պասկևիչի ճամբարը։

Առավոտյան գնացի քաղաքը դիտելու։ Տանտերերիս փոքրը հանձն առավ իմ չիչերոնը լինելու։ Դիտելով ամրություններն ու միջնաբերդը, որ շինված է անմատչելի ժայռի վրա, յես չեյի հասկանում, թե ինչպես ենք մենք կարողացել տիրանալ Կարսին։ Իմ հայը բացատրում եր ինձ, ինչպես կարողանում եր, ռազմական գործողությունները, որոնց նա ականատես եր յեղել։ Նկատելով նրա ձգտումը դեպի պատերազմը, յես առաջարկեցի նրան գնալ ինձ հետ բանակ։ Նա սիրով համաձայնվեց։ Յես ուղարկեցի նրան ձիեր բերելու։ Նա վերադարձավ մի սպայի հետ, որն ինձնից պահանջեց գրավոր հրաման։ Նրա ասիական դիմագծերից դատելով, յես հարկավոր չհամարեցի քրքրել թղթերս և հանեցի գրպանիցս հենց առաջին ձեռքս ընկած թերթիկը։ Սպան փքվելով սկսեց դիտել այն, իսկույն հրամայեց ձիեր բերել նորին բարձննդության համար ըստ հրամանագրի և վերադարձրեց ինձ իմ թուղթը։ Դա մի ձոն եր նվիրված մի կալմիկուհու, որ յես խլրդել եյի Կովկասյան կայարաններից մեկում։

Կես ժամ հետո մեկնեցի Կարսից, և Արտեմը (այդպես եր կոչվում իմ հայը) արդեն արշավում եր կողքիս թուրքական հովատակի վրա, քրդական ճկուն տեգը ձեռին, դաշույնը գոտին խրած, և զառանցելով թուրքերի ու ճակատամարտերի մասին։

Յես անցնում եյի մի վայրով, ուր ամենուրեք ցորեն եր ցանած։ Զորս կողմն յերևում եյին գյուղեր, բայց նրանք դատարկ եյին.—բնակիչները փախել եյին։ Ճանապարհը հիանալի յեր և խրուտ տեղերը սալահատակած—առուների վրա շինված եյին քարե կամուրջներ։ Հողը նկատելի կերպով բարձրանում եր—Սողանլուղի լեռնաշղթայի՝ հին Տավրոսի առաջավոր բլուրներն սկսում եյին յերևալ։ Անցավ մոտ յերկու ժամ, յես բարձրացա թեթև զառիվեր մի բարձրավանդակի վրա և հանկարծ տեսա մեր ճամբարը, որ տեղավորված եր Կարսաչայի ափին։ Մի քանի բոպե անց յես արդեն Ռ <այևկու> վրանումն եյի։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Սողանլուղի վրայով անցնելը: Հրաձգություն: Ճամբարային կյանք: Ցեզիներ: Ճակատամարտ Արզրումի սերասկիրի հետ: Պայթեցրած խրճիթ:

Ցես յեկա ժամանակին: Նույն որը (հունիսի 13-ին) զորքը հրաման ստացավ առաջ խաղալ: Ռ <այևսկու> մոտ ճաշելիս, յես լսում եյի յերիտասարդ գեներալների դատողություններն իրենց առաջիկա շարժման մասին: Գեներալ Բուրցովը ուղարկված եր դեպի ձախ Արզրումի մեծ ճանապարհով, ուղղակի Թուրքական ճամբարի դեմ, այն ինչ մնացյալ բոլոր զորքը աջ կողմով պետք է անցներ Թշնամու Թիկունքը:

Հինգերորդ ժամին զորքը առաջ շարժվեց: Ցես գնում եյի Նիժեգորոդյան Դրագունների գնդի հետ, խոսելով Ռ <այևսկու> հետ, վորին արդեն մի քանի տարի յեր, յես չեյի տեսել: Վրա հասավ գիշերը: Մենք կանգ առանք հովտում, ուր դադար եր արել ամբողջ զորքը: Այստեղ յես պատիվ ունեցա ներկայանալու կոմս Պասկևիչին:

Ցես կոմսին գտա տանը բիվակի կրակի մոտ, շրջապատված իր շտաբով: Նա ուրախ եր և ընդունեց ինձ սիրալիր կերպով: Հեռու լինելով ռազմական արվեստից, յես ընավ չեյի կարծում, վոր արշավանքի յելքը վորոշվում եր այդ բոպեյին: Այստեղ տեսա յես մեր Վ <ալխովսկուն>, վոտից գլուխ փոշոտված, միրուքը բուսած, հոգսերից հյուծված: Նա, սակայն, վորպես հին ընկեր, ժամանակ գտավ ինձ հետ զրուցելու: Այստեղ տեսա յես նաև Մ <իխայիլ> Պ <ուշկինին>, վորն անցյալ տարի վիրավորված եր: Նա սիրված եր ու հարգված, վորպես հիանալի ընկեր և քաջ զինվոր:

Իմ հին բարեկամներից շատերը շրջապատեցին ինձ։ Ինչպես եկին նրանք փոխվել, ինչպե՛ս արագ է անցնում ժամանակը։

Heu! fugaces, Posthume, Posthume,
Labuntur anni... [1])

Ցեռ վերադարձա Ռ <այևսկու> մոտ և գիշերեցի նրա վրանում։ Գիշերվա կեսին ինձ զարթեցրին սարսափելի աղաղակները—կարելի չեր կարծել, թե թշնամին անսպասելի հարձակում է գործել։ Ռ <այևսկին>ուղարկեց իմանալու տագնապի պատճառը—մի քանի թուրքական ձիեր, կապից պոկված, վազվզում եկին ճամբարի մեջ և մուսուլմանները (այդպես են կոչվում մեր զորքում ծառայող թուրքերը) նրանց բռնում եկին։

Արշալույսին զորքը առաջ շարժվեց։ Մոտեցանք անտառապատ սարերին։ Մտանք ձորը։ Դրագունները միմյանց ասում եկին. տես, յեղբայր, պինդ կաց, հա, հրես կարտեչ է թափելու։ Իսկապես տեղադրությունը նպաստավոր եր զարանակալության համար։ Բայց թուրքերը այլ կողմ գրավված, գեներալ Բուրցովի շարժումով չոգավեցին հարմար միջոցից։ Մենք հաջողությամբ անցանք վտանգավոր ձորը և կանգնեցինք Սողանլուգի բարձունքներում, թշնամու ճամբարից 10 վերստ հեռավորության վրա։

Բնությունը մեր շուրջը մռայլ եր։ Ողը ցուրտ եր, սարերը ծածկված եկին տրտմատեսիլ սոճիներով։ Ջորակում ձյուն կար։

Usque nec Armeniis in oris,
Amice Valgi, stat glacies iners
Menses per omnes... [2])

Հաղիվ կարողացանք մենք հանգստանալ և ճաշել, յերբ լսեցինք հրացանաձգության ձայներ։ Ռ <այևսկին> ուղարկեց տեղեկանալու։ Նրան զեկուցեցին, վոր թուրքերը յերկուստանք հրաձգության են բռնվել մեր առաջավոր պիկետների հետ։ Ցեռ Ս <եմիչևի> հետ գնացի դիտելու ինձ համար նոր այդ տեսարանը։ Մենք հանդիպեցինք վիրավոր կողակի։ Նա յերերալով նստած եր թամբի վրա գունատված և արյունոտված։ Ցերկու կողակ պահում եկին նրան։ Շատ են թուրքերը հարցրեց Ս <եմիչևը>։ Ողի նման վրա յկ տալիս, ձերդ բարձննդություն,—պատասխանեց նրանցից մեկը։

---

[1]) <Ավաղ, Պոսթում, Պոսթում սլանում են արագավազ տարիները>...

[2]) <Ցեվ Հայաստանի ափերը, իմ բարեկամ Վալգիոս, վոչ բոլոր ամիսներն են կաշկանդված անշարժ սառույցով>։

Զորն անցնելով, մենք հանկարծ տեսանք դիմացը սարլանջին մոտ 200 կողակ, վորոնք շարված էին լավայով։ Նրանցից վերև մոտ 500 թուրք։ Կողակները դանդաղորեն յետ էին քաշվում։ Թուրքերը վրա էին տալիս մեծ հանդգնությամբ, նշան էին բռնում 20 քայլից և կրակելով, յետ էին արշավում։ Նրանց բարձր չալմաները, գեղեցիկ դոլիմանները և ձիերի փայլուն սարքը խիստ հակապատկերն էին կողակների կապույտ համազգեստների և հասարակ ձիասարքի։ Մերոնցից մի 15 մարդ արդեն վիրավորվել եր։ Յենթադնդապետ Բասովը ուղարկեց ոգնություն խնդրելու։ Այդ ժամանակ նա ինքը վերք ստացավ վոտից։ Կողակները քիչ խառնվեցին։ Բայց Բասովը նորից ձի նստեց և մնաց իր զորախմբում։ Ոգնությունը հասավ։ Թուրքերն այդ նկատելով, իսկույն անհայտացան, թողնելով սարի վրա կողակի գլխատված ու անդամահատված մերկ դիակը։ Թուրքերը կտրած գլուխներն ուղարկում են Կոստանդինոպոլիս, իսկ ձեռների դաստակները, թաթախելով արյան մեջ, դրոշմում են իրենց դրոշակների վրա։ Հրաձգությունը հանդարտվեց։ Արծիվները, զորքերի այդ ուղեկիցները ճախրեցին սարի վերևը, բարձունքից իրենց համար ավար փնտրելով։

Այդ ժամանակ գեներալների ու սպաների մի խումբ յերևեցավ.—կոմս Պասկևիչը յեկավ և գնաց դեպի սարը, վորի յետև թաղնվել էին թուրքերը։ Նրանք զորացված էին 4000 հեծելազորով, վոր թաղնված եր լեռնագոգում ու ձորակներում։ Սարի բարձունքից մեր առաջ բացվեց թուրքական ճամբարը, վորը մեզանից բաժանված եր ձորակներով և բարձունքներով։ Մենք ուշ վերադարձանք։ Մեր ճամբարով անցնելիս յես տեսա մեր վիրավորներին, վորոնցից 5 մարդ մեռան նույն գիշերը և մյուս որը։ Յերեկոյան այցելեցի յես յերիտասարդ Ոստեն-Սակենին, վորը վիրավորվել եր նույն որը ուրիշ ճակատամարտում։

Ճամբարային կյանքն ինձ շատ դուր եր գալիս։ Թնդանոթը մեզ վեր եր կացնում արշալույսին։ Քունը վրաններում զարմանալի առողջարար է։ Ճաշին մենք ասիական խորոված ի վերայից խմում էինք անգլիական գարեջուր և տավրյան ձյուներում սառցրած շամպայն։ Մեր հասարակությունը բազմազան եր։ Գեներալ Ռայեսկու վրանում հավաքվում էին մուսուլմանական գնդերի բեկերը և զրույցը տարվում եր թարգմանի միջոցով։ Մեր զորքի մեջ կային թե մեր անդրկովկասյան մար-

գերի ժողովուրդներ և թե նոր նվաճված յերկիրների բնակիչներ։ Դրանցից յես ավելի հետաքրքրությամբ նայում եյի յեզիդների վրա, վորոնք արևելքում դիվապաշտ են համարվում։ Մոտ 300 ընտանիք բնակվում են Արարատի ստորոտում։ Նրանք ընդունեցին ռուսաց թագավորի տիրապետությունը։ Նրանց պետը, վոր բարձրահասակ ու այլանդակ մի տղամարդ եր, կարմիր թիկնոցով ու սև գլխարկով, գալիս եր յերբեմն վողջույնի ամբողջ հնծելազորի պետ գեներալ Ռայեվսկու մոտ։ Յես աշխատում եյի յեզիդից իմանալ ճշմարտությունը նրանց հավատի դավանության մասին։ Իմ հարցումներին, նա պատասխանում եր, վոր այն համբավը, թե իբր յեզիդները յերկրպագում են սատանային, դատարկ առասպել է, վոր նրանք մի աստծու յեն հավատում, վոր նրանց որենքով դևին անիծելը, ճիշտ է, համարվում է անվայել և անազնիվ բան, վորովհետև նա հիմա անբախտ է, բայց ժամանակով կարող է ներումն ստանալ, վորովհետև չի կարելի սահմաններ դնել Ալլահի վողորմածության։ Այդ բացատրությունն ինձ հանգստացրեց։ Յես շատ ուրախ եյի յեզիդների համար, վոր նրանք սատանային չեն յերկրպագում, և նրանց մոլորություններն ինձ արդեն շատ ավելի ներելի թվացին։

Իմ ծառան ճամբար հասավ ինձնից յերեք որ հետո։ Նա յեկավ գումակասյան հետ, վորը թշնամու աչքի առաջ աջողությամբ միացավ բանակին։ NB.—ամբողջ արշավանքի ժամանակ մեր բաղմաթիվ գումակից վոչ մի սայլ չեր ընկել թշնամու ձեռքը։ Այն կարգը, վորով գումակը հետևում եր զորքին, իսկապես վոր զարմանալի յե։

Հունիսի 17-ին առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և յերկու ժամից հետո տեսանք Ղարաբաղյան գունդը, վորը վերադառնում եր ուժ թուրքական դրոշակներով։ Գնդապետ Ֆրեդերիկսը գործ եր ունեցել քուրդ-կապանների յետևը դարան մտած թշնամու հետ, դուրս եր մղել նրանց և քշել։ Հնծելազորի պետ Ոսման-Փաշան հաղիվ եր կարողացել փրկվել։

Հունիսի 18-ին ճամբարը տեղափոխվեց ուրիշ տեղ։ 19-ին հաղիվ թնդանոթը արձնացրեց մեզ, ամեն ինչ ճամբարում շարժվեց։ Գեներալները գնացին դեպի իրենց պոստերը։ Զորագնդերը շարվում եյին, սպաները կանգնում եյին իրենց դասակների մոտ։ Յես ճնացի մենակ, չիմանալով, թե վՀր կողմը գնամ,

ձիս թողի աստծու կամքին։ Ցես հանդիպեցի գեներալ Բուրցովին, վորն ինձ կանչեց դեպի ձախ թևը։ Ի՞նչ բան է ձախ թևը,— մտածեցի յես և շարունակեցի ճանապարհս։ Ցես տեսա գեներալ Մուրավյովին, վորը դասավորում էր թնդանոթները։ Շուտով յերևացին գելի-բաշները և սկսեցին պտտվել հովտի մեջ, հրաձգության բռնվելով մեր կողակների հետ։ Այդ միջոցին նրանց հետևազորի մի խիտ բազմություն անցնում էր հովտով։ Գեներալ Մուրավյովը հրամայեց կրակել։ Կարտեչը բռնեց հենց բազմության մեջ տեղիցը։ Թուրքերը մի կողմ հորդեցին ու թաղնվեցին բարձրության յետևը։ Ցես տեսա կոմս Պասկևիչին, շրջապատված իր շտաբով։ Թուրքերը շրջանցում էին մեր զորքը, վորը բաժանված էր նրանցից խոր ձորակով։ Կոմսն ուղարկեց Պ <ուշչինին> դիտելու ձորակը։ Պ <ուշչինն> արշավեց։ Թուրքերը նրան ձիավորի տեղ ընդունեցին և նրա վրա համազարկ տվին։ Բոլորը ծիծաղեցին։ Կոմսը հրամայեց դուրս բերել թնդանոթներն ու կրակել։ Թշնամին ցրվեց դեպի սարն ու ձորակը։ Ձախ թևում, ուր ինձ կանչում էր Բուրցովը, տաք կռիվ էր տեղի ունենում։ Մեր առաջը (կենտրոնի դիմաց) արշավում էր թյուրքական հեծելազորը։ Կոմսն ուղարկեց նրա դեմ գեներալ Ռայեվսկուն, վորը գրոհի տարավ Նիժեգորոդյան գունդը։ Թուրքերն անհետացան։ Մեր թյուրքերը շրջապատում էին նրանց վիրավորներին և արագորեն հանում նրանց շորերը, մերկ թողնելով դաշտի մեջ։ Գեներալ Ռայեվսկին կանգ առավ ձորակի յեզրին։ Ցերկու եսկադրոն, բաժանվելով գնդից, գրավվել էին իրենց հետապնդումով. նրանց փրկեց գնդապետ Սիմոնիչը։

Ճակատամարտը հանդարտվեց. թուրքերը մեր աչքի առաջ սկսեցին գետինը քանդել ու քարեր կրել, ամրանալով, ըստ իրենց սովորության։ Նրանց հանգիստ թողին։ Մենք իջանք ձիերից և սկսեցինք ճաշել, ինչ աստված տվել էր։ Այդ ժամանակ կոմսի մոտ բերին մի քանի գերի։ Մեկը նրանցից սաստիկ վիրավորված էր։ Նրանց հարցուփորձ արին։ Մոտ ժամի 6-ին զորքերը նորից հրաման ստացան գնալ թշնամու դեմ։ Թուրքերը շարժվեցին իրենց քար-կապանների յետևը, դիմավորեցին մեզ թնդանոթային կրակով և շուտով սկսեցին նահանջել։ Մեր հեծելազորը գնում էր առջևից։ Մենք սկսեցինք իջնել դեպի ձորակը։ Ձիերի վոտների տակ հողը պոկվում և թափվում էր։ Ամեն բոպե իմ ձին կարող էր ընկնել և այն ժամանակ ամբողջ

ուլանական գունդը կանցներ իմ վրայով։ Սակայն աստված աղատեց։ Հազիվ դուրս յեկանք սարերի վրա ընկած լայն ճանապարհը, մեր ամբողջ հեծելազորն իսկույն արշավեց ամբողջ թափով։ Թուրքերը փախան։ Կողակները մտրակելով ճանապարհին ձգած թնդանոթները, սլանում եյին նրանց մոտով։ Թուրքերը նետվում եյին ճանապարհի յերկու կողմում գտնվող ձորակները. նրանք այլևս չեյին կրակում. գոնե վոչ մի գնդակ չանցավ ականջներիս մոտով։ Հետապնդողներից առաջինները մեր թյուրքական գնդերն եյին, վորոնց ձիերը աչքի յեն ընկնում արագությամբ և ուժով։ Իմ ձին սանձակոտոր յեղած նրանցից յետ չեր մնում։ Ցեսս հազիվ եյի կարողանում նրան պահել։ Նա կանգ առավ մի յերիտասարդ թյուրքի դիակի մոտ, վորն ընկած եր ճանապարհի լայնքով։ Նա, թվում եր, մոտ 18 տարեկան եր. գունատ, կուսական դեմքը չեր այլանդակված։ Նրա չալման ընկած եր փոշու մեջ. թրաշած ծոծրակը ծակված եր գնդակով։ Ցեսս քշեցի քայլով։ Շուտով հասավ ինձ <Ռայեվսկին։> Նա մի կտոր թղթի վրա մատիտով զեկուցում գրեց կոմս Պասկևիչին թշնամու կատարյալ պարտության մասին և առաջ գնաց։ Ցեսս հետևում եյի նրան հեռվից։ Վրա հասավ գիշերը։ Իմ հոգնած ձին յետ եր մնում և սայթաքում եր ամեն քայլափոխում։ Կոմս Պասկևիչը հրամայեց չդադարեցնել հետապնդումը և ինքն եր այն զեկավարում։ Գալիս անցնում եյին մեր հեծյալ ջոկատները։ Ցեսս տեսա գնդապետ Պոլյակովին, այդ որը կարևոր դեր կատարած կողակների հրետանու պետին և նրա հետ միասին յեկա մի ձգած գյուղ, վորտեղ կանգ եր առել կոմս Պասկևիչը, հետապնդումը դադարել եր. վրա հասած գիշերվա պատճառով։ Մենք գտանք կոմսին զետնափոր խրճիթի կտուրին, կրակի մոտ։ Նրա մոտ բերում եյին գերիներին։ Այստեղ եյին նաև համարյա բոլոր պետերը։ Կողակները սանձերը բռնած պահում եյին նրանց ձիերը։ Կրակը լուսավորում եր մի պատկեր, վորն արժանի յեր Սալվատոր-Ռոզային, գետակն աղմկում եր խավարի մեջ։ Այդ ժամանակ կոմսին զեկուցեցին, վոր գյուղում կան պահված վառոդի պաշարներ և վոր պետք է յերկյուղ կրել պայթյունից։ Կոմսը թողեց խրճիթին իր ամբողջ շքախմբով։ Մենք գնացինք դեպի մեր համբարը, վորը գտնվում եր արդեն 30 վերստ հեռավորության վրա այստեղից, ուր մենք գիշերել եյինք։ Ճանապարհը լիքն եր հեծյալ ջոկատներով։ Հազիվ մենք հա-

սանք տեղ, յերբ հանկարծ յերկինքը լուսավորվեց, կարծես թե մեթեորով և մենք լսեցինք խուլ պայթյուն։ Այն խրճիթը, վոր մենք թողինք քառորդ ժամ առաջ՝ հոդս եր ցնդել.—այնտեղ եր պահված յեղել վառոդի պաշարը։ Ցրիվ յեկած քարերը տակոցն եյին արել մի քանի կողակի։

Ահա այն բոլորը, ինչ վոր կարողացա յես տեսնել այն ժամանակ։ Յերեկոյան յես իմացա, վոր այդ ճակատամարտում ջարդ եր կրել Արզրումի սերասկիրը, վորը 30000 զորքով գնում եր միանալու Հակի-Փաշայի հետ։ Սերասկիրը փախել եր դեպի Արզրում։ Նրա զորքը, վորը հետ եր մղված Սողանլուղի մյուս կողմը, ցրվել եր, հրետանին վերցված եր և Հակի-Փաշան մենակ եր մնացել մեր ձեռքին։ Կոմս Պասկևիչը նրան ժամանակ չտվեց կարգադրելու։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ճակատամարտ Հակի-Փաշայի հետ։ Թյուրք բեկի մահը։ Հերմոֆրոդիտ։ Գերի փաշան։ Արաքս։ Հովվի կամուրջը։ Հասսան Ղալա։ Տաք աղբյուր։ Արշավանք դեպի Արզրում։ Բանակցություններ։ Արզրումի առումը։ Թուրք դեքիներ։ Դերվիշ։

Մյուս որը հինգերորդ ժամին ճամբարը զարթնեց ու հրաման ստացավ առաջ շարժվել։ Դուրս գալով վրանից յես հանդիպեցի կոմս Պասկևիչին, որն ամենից առաջ եր վեր կացել։ Նա տեսավ ինձ։ «Etes vous fatigue' de la journe'e d'hier?» Mais un peu, Mr· le Comte· J'en suis fâché pour vous, car nous allons faire encore une marche pour joindre le Pacha, et puis il faudra poursuivre, l'ennemi encor une trentaine de verstes» [1]·

Մենք շարժվեցինք և ժամը մոտ ութին հասանք մի բարձր տեղ, որից Հակի-Փաշայի ճամբարն յերևում եր, որպես ափի վրա։ Թուրքերն իրենց բոլոր մարտկոցներից անվնաս կլրակ բաց արին։ Այդ միջոցին նրանց ճամբարում նկատվում եր մեծ շարժում։ Հոգնածությունն ու առավոտյան շոգը մեղանից շատերին հարկադրեցին իջնել ձիերից և պառկել թարմ խոտի վրա։ Ցես սանձափոկը փաթաթեցի ձեռքիս և քաղցը քնեցի, սպասելով առաջ շարժվելու հրամանին։ Քառորդ ժամ անց ինձ զարթեցրին։ Ամեն ինչ շարժման մեջ եր։ Մի կողմից զորասյուները շարժվում եյին թուրքական ճամբարի վրա, մյուս կողմից – հեծելազորը պատրաստվում եր հետապնդելու թշնամուն։ Ցես գընացի Նիժեգորոդյան դնդի յետևից, բայց իմ ձին կաղում եր։

---

1) <Դուք չմոռնել յերեկվանից հետո։ – Մի քիչ, պ. կոմս։ – Շատ վշտացած եմ ձեր փոխարեն, որովհետև մենք պետք և ևս մի չվերթ կատարենք. որպեսզի հասնենք փաշային, իսկ դրանից հետո դեռ հարկ կլինի մի յերեսուն վերստ ել հետապնդել թշնամուն>։

Ցես յետ մնացի։ Իմ մոտով անցավ ուլանական գունդը։ Հետո Վ.<ոլկովսկին> սուրաց յերկաթնդանոթներով։ Ցես մընացի մենակ անտառապատ սարերում։ Ցես հանդիպեցի մի դըրագունի, վորն ինձ հայտնեց, թե անտառը լիքն է թշնամիներով։ Ցես վերադարձա։ Ցես հանդիպեցի գեներալ Մ.<ուրավյովին> մի հետևակ գնդի հետ միասին։ Նա մի վաշտ ուղարկեց անտառը, մաքրելու այն թշնամիներից։ Մոտենալով ձորակին, տեսա յես մի արտասովոր տեսարան։ Ծառի տակ պառկած եր մեր թյուրք բեկերից մեկը՝ մահացու կերպով վիրավորված։ Նրա մոտ հեկեկում եր նրա սիրելին։ Մոլլան, ծունկ չոքած, աղոթում եր։ Մեռնող բեկը չափազանց հանգիստ եր և անշարժ նայում եր իր յերիտասարդ բարեկամին։ Ձորակում հավաքված եյին մոտ 500 գերի։ Մի քանի վիրավորված թուրքեր նշաններով կանչում եյին ինձ, յերևի ինձ բժշկի տեղ ընդունելով, և պահանջելով ոգնություն, վորը յես չեյի կարող նրանց տալ։ Անտառից դուրս յեկավ մի թուրք, սեղմելով իր վերքը արյունոտված շորի կտորով։ Զինվորները մոտեցան նրան, վորպեսզի սվինահար անեն, գուցե մարդասիրությունից դրդված։ Բայց այդ ինձ չափազանց վրդովեցրեց։ Ցես պաշտպանեցի խեղճ թուրքին և հազիվ հաղ նրան ուժասպառ և արյունաքամ յեղած վիճակում բերի իր ընկերների մոտ։ Նրանց մոտ եր գնդապետ Ա.<նրեպը>։ Նա բարեկամաբար ծխում եր նրանց ծխամորճերից, չնայած, վոր լուրեր կային ժանտախտի մասին, վորն իբրև թե յերևացել է թուրքական ճամբարում։ Գերիները նստած հանգիստ խոսում եյին իրար հետ։ Համարյա թե բոլորն էլ յերիտասարդ եյին։ Հանգըստանալով, մենք առաջ գնացինք։ Ամբողջ ճանապարհին ընկած եյին դիակներ։ 15 վերստի վրա յես գտա Նիժեգորոդյան գունդը, վորը կանգ եր առել գետակի ափին ժայռերի մեջ։ Հետապընդումը շարունակվեց ևս մի քանի ժամ։ Իրիկնադեմին մենք հասանք խիտ անտառով շրջապատված մի հովիտ, և վերջապես յես կարող եյի ուղածիս չափ քնել այս յերկու որում ձիով անցնելով ավելի քան ութսուն վերստ։

Մյուս որը թշնամուն հետապնդող զորքերը հրաման ստացան վերադառնալ ճամբարը։ Այստեղ մենք իմացանք, վոր գերիների մեջ կա մի հերմաֆրոդիտ։ Ռ.<այևսկին> իմ խնդրանոք, հրամայեց բերել նրան։ Ցես տեսա բարձրահասակ, բավականին հաստ մի մարդ, վորը դեմքով նման եր պառավ, կարճ քը-

թանի չուխոնուհու։ Մենք դիտեցինք նրան բժիշկի ներկայությամբ։ Erat vir, mammosus, ut femina, habebat t<esticulos> non evolutos, p<enem>que parvum et puerilem. Quaerebamus, sit ne exsectus?—Deus, respondit, castrav'itme։

Սույն հիվանդությունը, վոր հայտնի է յեղել Հիպոկրատեսին, ըստ ճանապարհորդների վկայության, հաճախ է պատահում քոչվոր թաթարների ու թուրքերի մոտ։ Տնս թուրքական անունն է սույն կարծեցյալ հերմաֆրոդիտների։

Մեր զորքը կանգնած եր նախորյակին վերցրած թուրքական ճամբարում։ Կոմս Պասկևիչի վրանը գտնվում եր մեր կողակների կողմից դեբված Հակի-Փաշայի կանաչ վրանի մոտ։ Ցեռ գնացի նրա մոտ և նրան գտա շրջապատված մեր սպանելով։ Նա նստած եր ծալապատիկ և ծխամորճ եր ծխում։ Նա մոտ քառասուն տարեկան եր յերևում։ Ծանրակշռություն ու խորին հանգստություն եր արտահայտում նրա դեղեցիկ դեմքը։ Անձնատուր լինելով, նա խնդրել եր, վոր տան իրեն մեկ բաժակ սուրճ և ազատեն իրեն հարցուփորձից։

Մենք կանգնած եյինք հովտում։ Սողանլուղի ձյունապատ և անտառապատ լեռներն արդեն մեր յետևն եյին մնացել։ Մենք առաջ գնացինք, այլևս վոչ մի տեղ չհանդիպելով թշնամուն։ Գյուղերը դատարկ եյին։ Շրջապատը տխրալի յեր։ Մենք տեսանք Արաքսը, վորն արագ հոսում եր իր քարքարոտ ափերի միջով։ Հասան-Ղալայից 15 վերստ հեռու գտնվում եր մի կամուրջ՝ սքանչելի և համարձակ կառուցված յոթ անհավասար կամարների վրա։ Ավանդությունը վերագրում է նրա կառուցումը հարստացած մի հովվի, վորը մեռել է վորպես ճգնավոր ցլուրի գլխին, ուր մինչև այժմ էլ ցույց են տալիս նրա պերեզմանը յերկու մենավոր սոճիների հովանու տակ։ Հարևան շինականները ուխտի յեն գալիս այստեղ։ Կամուրջը կոչվում է Զորան-Տեփրի (Հովվի կամուրջ)։ Թավրիզի ճանապարհն այստեղով է անցնում։

Կամուրջից մի քանի քայլ հեռու յես այցելեցի քարվանսարայի մռայլ ավերակները։ Այստեղ վոչ վոք չկար, բացի մի հիվանդ եշից, վորին յերևի ձգել եյին այստեղ վախչող շինականները։

Հունիսի 24-ին առավոտյան մենք գնացինք դեպի Հասան-Ղալահին բերդը, որը նախընթաց որը գրավել էր Իշխան Բեկովիչը։ Նա գտնվում էր 15 վերստ հեռավորության վրա մեր գիշերոթի տեղից։ Ցերկար չվերթները հոգնեցրել էին ինձ։ Ցեռ հույս ունեի հանգստանալու, բայց այլ կերպ դուրս եկավ։

Հեծելազորի յելույթից առաջ մեր ճամբարը յեկան լեռներում բնակվող հայեր, պահանջելով պաշտպանություն թուրքերից, որոնք յերեք որ դրանից առաջ քշել էին նրանց տավարը։ Գնդապետ Ա. <Նրեպը> լավ չհասկանալով, թե ինչ են նրանք ուզում, կարծեց, թե ինչ վոր թուրքական ջոկատ կա սարերում և ուլանական գնդի մի եսկադրոն հետ գնաց մի կողմի վրա, հայտնելով Ռ. <այեսկուն>, վոր 3000 թուրք գտնվում են սարերում։ Ռ. <այեսկին> գնաց նրա յետևից, նրան վտանգի դեպքում ոգնելու համար։ Ցեռ ինձ գործուղված էի համարում Նիժեգորոդյան գնդին և մեծ տհաճությամբ արշավեցի հայերին ազատելու։ Անցնելով մի քսան վերստ, մենք մտանք մի գյուղ, և տեսանք մի քանի յետ մնացած ուլաններ, վորոնք ձյուղ իջած, մերկացած թրերով հետապնդում էին մի քանի հավերի։ Այստեղ շինականներից մեկը բացատրեց Ռ. <այեսկուն>, վոր խոսքը 3000 յեղների մասին էր, վոր յերեք որ առաջ քշել էին թուրքերը և վորոնց շատ հեշտ կլինի հասնել յերկու որում։ Ռ. <այեսկին> հրամայեց ուլաններին դադարեցնել հավերի հետապնդումը և հրաման ուղարկեց գնդապետ Ա. <Նրեպին> վերադառնալու։ Մենք յետ դարձանք և, դուրս գալով լեռներից յեկանք Հասան-Ղալայի տակը։ Այդպիսով մենք 40 վերստ պտույտ տվինք, վորպեսզի մի քանի հայկական հավերի կյանքը փրկած լինենք, մի բան, վոր ինձ բնավ զվարճալի չեր թվում։

Հասան-Ղալան համարվում է Արզրումի բանալին։ Քաղաքը շինված է բերդով պսակված ժայռի ստորոտում։ Այնտեղ մոտ հարյուր հայ ընտանիք կար։ Մեր ճամբարը գտնվում էր բերդի առաջ ձգված լայն հարթավայրում։ Այստեղ յես այցելեցի մի կլոր քարե շինություն, վորի մեջ գտնվում է մի յերկաթե ծծմբային ջերմուկ։

Կլոր ավազանն ունի մոտ յերեք սաժեն տրամագիծ։ Ցեռ յերկու անգամ լողալով անցա ավազանի մի ծայրից մյուսը և հանկարծ գլխապտույտ ու սրտի խառնոց զգացի, ու հազիվ ուժ ունեցա դուրս գալու աղբյուրի քարե յեզրը։ Այդ ջրերը հռչակ-

ված են Արևելքում, բայց չունենալով կարգին բժիշկներ, բնակիչներն ոգտվում են նրանցից ինչպես պատահի և յերևի առանց մեծ հաջողության։

Հասան-Դալայի պարիսպների տակ հոսում է Մուրդու <լ> գետակը, վորի ափերը ծածկված են յերկաթե աղբյուրներով, վորոնք խփում են քարերի տակից և հոսում դեպի գետը։ Նրանք այնքան ախորժահամ չեն, վորքան Կովկասի նարզանը, և պղնձի համ են տալիս։

Հունիսի 25-ին, թագավոր կայսրի անվանակոչության որը մեր ճամբարում բերդի պարիսպների տակ զորագնդերը մաղթանք կատարեցին։ Ճաշին կոմս Պասկևիչի մոտ եյինք, և յերբ խմում եյին թագավորի կենացը, կոմսը հայտարարեց արշավանք դեպի Արզրում։ Յերեկոյան ժամը հինգին զորքն արդեն դուրս յեկավ։

Հունիսի 26-ին մենք հասանք Արզրումից հինգ վերստի վրա գտնվող սարերին։ Այդ սարերը կոչվում են Աղ-Դաղ (սպիտակ սարեր). նրանք կավճային են։ Սպիտակ կծու փոշին ուտում եր մեր աչքերը, նրանց արտում տեսքը թախիծ եր առաջացնում։ Արզրումի մոտիկությունը և արշավանքի ավարտման վստահությունը մխիթարում եր մեզ։

Յերեկոյան կոմս Պասկևիչը գնացել եր դիտելու տեղ-դրությունը։ Թուրք ձիավորները, վոր ամբողջ որը պտույտ եյին գալիս մեր պիկետների առաջ, սկսեցին կրակել նրա վրա։ Կոմսը մի քանի անգամ սպառնաց նրանց մտրակով, չդադարելով խորհրդակցել գեներալ Մ <ուրավյովի> հետ։ Նրանց կրակոցներին չեյին պատասխանում։

Այդ միջոցին Արզրումում մեծ իրարանցում եր տիրում։ Սերասկիրը, վոր իր պարտությունից հետո յեկել եր քաղաք, լուր եր տարածել, թե ռուսները կատարյալ պարտություն են կրել։ Նրա յետևից, արձակված գերիները բերել հասցրել եյին բնակիչներին կոմս Պասկևիչի կոչը։ Փախստականները բացել եյին սերասկիրի սուտը։ Շուտով իմացել եյին, վոր ռուսներն արագորեն մոտենում են։ Ժողովուրդն սկսել եր խոսել անձնատուր լինելու մասին։ Սերասկիրն ու զորքը մտածում եյին պաշտպանվել։ Տեղի յեր ունեցել խռովություն։ Մի քանի Ֆրանկ սպանվել են զայրացած ամբոխի կողմից։

Մեր ճամբարը (26-ի առավոտյան) յեկան պատգամավորներ ժողովրդի և սերասկիրի կողմից։ Որն անցավ բանակցու-

թյունների մեջ։ Յերեկոյան ժամը 5-ին պատգամավորները վերադարձան Արզրում և նրանց հետ գեներալ իշխան Բեկովիչը։ վորը քաջ ծանոթ եր ասիական լեզուներին ու սովորություններին։

Մյուս որը առավոտյան մեր զորքն առաջ շարժվեց։ Արզրումի արևելյան կողմում, Թոփ-Դաղի բարձրության վրա, գտնվում եր թուրքական մի մարտկոցը։ Զորագնդերը գնացին դեպի նա, թուրքական թնդանոթաձգությանը պատասխանելով թմբկահարությամբ և յերաժշտությամբ։ Թուրքերը փախան և Թոփ-Դաղը գրավված եր։ Յես յեկա այնտեղ բանաստեղծ Յու <զեֆովիչի> հետ։ Թողած մարտկոցում մենք գտանք կոմս Պասկևիչին իր ամբողջ շքախմբով։ Սարի բարձունքից ձորակում մեր աչքի առաջ տարածվում եր Արզրումն իր միջնաբերդով, մինարեթներով, կանաչ կտուրներով՝ մեկը մյուսին կպած։ Կոմսը ձիու վրա յեր։ Նրա առաջ գետնին նստած եյին թուրքական պատգամավորները, վորոնք բերել եյին քաղաքի բանալիները։ Բայց Արզրումում նկատվում եր հուզմունք։ Հանկարծ քաղաքի պատնեշի վրա փայլկտեց կրակը, յերևաց ծուխը և ռումբերը թռան դեպի Թոփ-Դաղ։ Նրանցից մի քանիսն անցան կոմս Պասկևիչի գլխի վրայով։ Նույն րոպեին Թոփ-Դաղ հասավ իշխան Բեկովիչը, վորն յերեկվանից գտնվում եր Արզրումում բանակցությունների համար։ Նա հայտնեց, վոր սերասկիրն ու ժողովուրդը վաղուց համաձայն են անձնատուր լինելու, բայց վոր մի քանի անհնազանդ արնաուներ Թոփչի-Փաշայի առաջնորդությամբ, տիրացել են քաղաքի մարտկոցներին և խռովություն են գցում։ Գեներալները մոտեցան կոմսին և թույլտվություն խնդրեցին, հարկադրելու թուրքական մարտկոցներին լռելու։ Արզրումի բարձրաստիճան մարդիկ, վոր նստել եյին հենց իրենց թնդանոթների կրակի տակ, կրկնեցին նույն խնդիրքը։ Կոմսը մի առ ժամանակ դանդաղում եր։ Վերջապես հրաման տվեց, ասելով.— Հերիք հիմարություն անեն։— Իսկույն մոտեցրին թնդանոթները, սկսեցին կրակել և թշնամու կրակոցը գնալով հանդարտվեց։ Մեր զորագնդերը գնացին դեպի Արզրում և հունիսի 27-ին, Պոլտավայի ճակատամարտի տարեդարձի որը, յերեկոյան ժամը 6-ին ռուսական դրոշը ծածանվում եր Արզրումի միջնաբերդի վրա։

Ռ <այեվսկին> գնաց քաղաք—յես էլ գնացի նրա հետ։ Մենք մտանք քաղաք, որը զարմանալի տեսարան էր ներկայացնում։ Թուրքերն իրենց տափակ կտուրներից մռայլ նայում էին մեզ վրա։ Հայերն աղմկելով վխտում էին նեղ փողոցներում։ Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առաջից, խաչակնքելով ու կրկնելով.—Բրիստիան... Բրիստիան... Մենք մոտեցանք բերդին, ուր մուտք էր գործում մեր հրեատին։ Մեծ զարմանքով յես այստեղ հանդիպեցի իմ Արտեմին, որն արդեն շրջագայում էր քաղաքում, չնայած խիստ հրամանին, որ վոչ վոք ճամբարից չբացակայի առանց հատուկ թույլտվության։

Քաղաքի փողոցները նեղ են ու ծուռ։ Տները բավական բարձր են։ Ժողովուրդը շատ է—խանութները փակ են։ Մնալով քաղաքում մոտ յերկու ժամ, յես վերադարձա ճամբար։ Սերասկիրն ու չորս փաշաները, որ գերի էին ընկել, արդեն այստեղ էին գտնվում։ Փաշաներից մեկը, մի վախտ, սարսափելի անհանդիստ ծերուկ աշխույժ խոսում էր մեր գեներալների հետ։ Տեսնելով ինձ Ֆրակով, նա հարցրեց, թե յես ով եմ։ Ռ <ուշչինը> ինձ բանաստեղծի տիտղոս տվեց։ Փաշան ձեռքերը ծալեց կրծքին և գլուխ տվեց ինձ, թարգմանի միջոցով ասելով—Որհնյալ է այն ժամը, յերբ հանդիպում ենք բանաստեղծի։ Բանաստեղծը դերվիշին յեղբայր է։ Նա չունի վոչ հայրենիք, վոչ յերկրային բարիքներ. և այն միջոցին, յերբ մենք, խեղճերս, հոգում ենք փառքի, իշխանության, գանձի մասին, նա հավասար է յերկրի տիրակալներին և նրան յերկրպագում են։

Փաշայի արևելյան վողջույնի այս խոսքերը մեզ բոլորիս շատ դուր յեկան։ Յես գնացի սերասկիրին տեսնելու։ Նրա վրանի մուտքի մոտ յես հանդիպեցի նրա սիրելի մանկլավիկին, տասնչորս տարեկան սևաչյա մի տղայի, հարուստ արևելյան զգեստով։ Սերասկիրը մի սպիտակահեր ծերունի յեր, ամենատովորական արտաքինով, նստած էր խորը վհատության մեջ։ Նրա շուրջը խմբվել էին մեր սպաները։ Դուրս գալով նրա վրանից, յես տեսա մի յերիտասարդ, որը կիսամերկ էր, վոչխարի մորթե գլխարկով, մի մեծ մահակ ձեռքին և մի պարկ ուսին։ Նա բռնում էր ամբողջ կոկորդովը մեկ։ Ինձ ասացին, որ դա իմ յեղբայրակիցն է, դերվիշ է, որ յեկել է վողջունելու հաղթողներին։ Նրան հազիվ հազ դեն քշեցին։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Արզրում: Ասիական ճոխություն: Կլիման: Գերեզմանատները: Սատիրական վոտանավորներ: Սերասկիրի ապարանքը: Թուրք փաշայի հարեմը: Ծանոտախտ: Բուրցովի մահը: Մեկնում Արզրումից: Վերադարձ: Ռուսական ժուրնալ:

Արզրումը (վորը սխալաբար կոչվում է Արզերում, Երզրում, Երզրոն) հիմնված է մոտավորապես 415 թվին Թեոդոսիոս Ցերկրորդի ժամանակ և կոչվում է Թեոդոսիոպոլիս: Վոչ մի պատմական հիշողություն չի կապվում նրա անվան հետ: Ցեռ նրա մասին գիտեյի միայն այն, վոր այստեղ, Հայի Բաբայի վկայությամբ, պարսից դեսպանին, ի հատուցումն ինչ վոր վիրավորանքի, մարդու ականջների փոխարեն, մատուցված են յեղել հորթի ականջներ:

Արզրումը համարվում է Ասիական Թուրքիայի գլխավոր քաղաքը: Նրա մեջ հաշվում եյին 100.000 բնակիչ, բայց թվում է, թե այդ թիվը չափազանց մեծացրած է: Նրա տները քարից են, կտուրները ծածկված են ճիմով, վոր քաղաքին չափազանց տարորինակ տեսք է տալիս, յերբ նայում ես նրա վրա բարձրից:

Գլխավոր ցամաքային առևտուրը Յեվրոպայի և Արևելքի միջև կատարվում է Արզրումի վրայով: Բայց նրա մեջ ապրանք քիչ է ծախվում, այստեղ ապրանքը դուրս չեն հանում, մի բան, վոր նկատել է նաև Տուրնֆորը, վորը գրում է, թե Արզրումում հիվանդը կարող է մեռնել մի գդալ խաշնդեղ գտնելու հնարավորություն չունենալով, այն ինչ քաղաքում ամբողջ պարկերով կա դրանից:

Զգիտեմ մի արտահայտություն, վորն ավելի անմիտ լիներ քան ասիական ճոխություն բառերը: Այդ դարձվածքը յերևվի ստեղծվել է խաչակրաց արշավանքների ժամանակ, յերբ

աղքատ ասպետները, թողնելով իրենց դղյակների մերկ պատերն ու կաղնու աթոռները, առաջին անգամ տեսել են կարմիր բաղմոցներ, յերփներանգ գորգեր և դաշույններ՝ գունավոր քարերով զարդարված դաստապաններով։ Այժմ կարելի յե ասել.—ասիական աղքատություն, ասիական խոզություն etc., իսկ ճոխությունն ի հարկե պատկանում է Յեվրոպային։ Արզրումում վոչ մի գնով չի կարելի գնել այն, ինչ դուք կգտնեք Պսկովի նահանգի առաջին պատահած գավառական քաղաքի մանրավաճառի կրպակում։

Արզրումի կլիման խիստ է։ Քաղաքը շինված է ձորակում, վորը 7000 ֆուտ բարձր է ծովից։ Նրա շուրջը գտնվող լեռները տարվա մեծ մասը ծածկված են լինում ձյունով։ Հողն անտառազուրկ է, բայց բերրի յե։ Նա վոռոգված է բազմաթիվ աղբյուրներով և ամեն կողմից խաչհատված է ջրանցքներով։ Արզրումը հռչակված է իր ջրով։ Յեփրատը հոսում է քաղաքից յերեք վերստ հեռավորության վրա։ Աղբյուրներ ամեն տեղ շատ կան։ Յուրաքանչյուրի մոտ կախված է շղթայի վրա թիթեղի գավաթ և բարի մուսուլմանները խմում են ու գովելուց չեն դադարում։ Անտառանյութը բերվում է Սողանլուցից։

Արզրումի զինանոցում գտնվեցին մեծ քանակությամբ հին զենքեր, սաղավարտներ, զրահներ, թրեր, վորոնք ժանգոտում են յերևի Գոտֆրեդի ժամանակներից։

Մեչիտները ցածր են և մութ։ Քաղաքից դուրս գտնվում է գերեզմանատունը։ Հուշարձանները սովորաբար քարե չալմայով զարդարված սյուներ են։ Յերկու թե յերեք փաշաների դամբարաններ աչքի յեն ընկնում ավելի մեծ ճարտարահյուսությամբ, սակայն նրանց մեջ չկա նրբագեղություն, չկա վոչ ճաշակ, վոչ էլ միտք... Մի ճանապարհորդ գրում է, վոր բոլոր ասիական քաղաքներից միայն Արզրումում նա գտել է մի աշտարակի ժամացույց, և այն էլ փչացած։

Այն նորամուծությունները, վոր սկսել է սուլթանը, դեռ մուտք չեն գործել Արզրում։ Ձորքը դեռ ևս կրում է իր գեղեցիկ արևելյան զգեստը։ Արզրումի և Կոստանդնուպոլսի միջև գոյություն ունի մրցություն, ինչպես Կազանի և Մոսկվայի միջև։ Ահա յենիչերի Ամին-Ողլուի հորինած սատիրական պոեմի սկիզբը։

Գյավուրներն են Ստամբոլը հիմա գովում,
Վաղն էլ հանկարծ յերկաթապատ կրունկով,
Ինչպես քնած ոձի՝ կըտրորեն նրան թագուն,
Հետո նորից կհեռանան, ու այդպես կթողնեն.
Ստամբոլն է քնած ահա խորը քնով։

Հրաժարվել է Ստամբոլը մարգարեյից,
Արեվելքի այն ճշմարիտ հին որենքից,
Վորին այն նենդ արևմուտքը խավարեցրեց,
Յեվ մոլության քաղցրությանը նա մասնակից,
Աղոթքներին և իր թրին դավաճանեց։
Ստամբոլը գոռ մարտերում էլ չի քրտնում,
Աղոթքի տեղ նա գինի յե հիմա խմում։

Հույս-հավատքի մաքուր բոցն է մեջը հանգչում,
Յեվ կանայք են գերեզմանոց մտնում, շրջում,
Պառավ կանայք վորոնում են ճամբարները,
Տղամարդիկ են նրանց համար հարեմ բերում.
Յեվ քնած է անդ կաշառված ծեր ներքինին։

Բայց այդպես չի Արզրումը լեռնաստանի,
Բայմաճամբա Արզրումը մեր անաղմուկ.
Մենք չենք քնած ճոխության մեջ ամոթալի,
Յեվ չենք հանում թասովը մեր փրփրալի
Գինու միջից մոլուցք, կրակ կամ թե աղմուկ։

Պաս ենք պահում։ Փայլուն շիթով ժուժկալ և ցայտ
Սուրբ ջրերն են մեր ծարավը ասա հագեցնում.
Յեվ խմբերով միշտ անսարսուռ, ժիր ու զվարթ
Ջիհադիներն են գեղի կռիվ արագ թռչում։
Հարեմներն են մեր անաոիկ, անմատչելի,
Մեր ներքինիք անկաշառ են, խիստ ավելի,
Յեվ կանայք են անդավաճան այնտեղ մնում *)։

*) Թարգմ. Հ. Պողոսյանի։

Յես ապրում եյի Սերասկիրի ապարանքում, այն սենյակներում, ուր տեղավորված եր յեղել հարեմը։ Ամբողջ որը թափառում եյի յես անթիվ անցարաններով, սենյակից սենյակ, կտուրից կտուր, սանդուխքից սանդուխք։ Ապարանքը թալանված եր թվում։ Սերասկիրը մտադրություն ունենալով փախչել, դուրս եր տարել այնտեղից ինչ վոր կարողացել եր։ Բազմոցների յերեսները պատառոտված եյին, գորգերը հանված։—Յերբ յես զբոսնում եյի քաղաքում, թուրքերը կանչում եյին ինձ և ցույց եյին տալիս լեզուն (նրանք ամեն մի Ֆրանկի բժշկի տեղ եյին ընդունում)։ Դա ինձ ձանձրացրեց, յես պատրաստ եյի նույն ձևով նրանց պատասխանել։ Յերեկոները յես անց եյի կացնում խելոք և սիրալիր Ս <ուխորուկովի> հետ. մեր պարապմունքների նմանությունը մեզ մոտեցնում եր։ Նա պատմում եր ինձ իր գրական մտադրությունների մասին, իր պատմական հետախուզումների մասին, վոր մի ժամանակ նա սկսել եր այնպիսի յեռանդով և հաջողությամբ։ Նրա իդեալների և պահանջների չափավորությունը իսկապես վոր սրտաշարժ է։ Ափսոս կլինի, յեթե նրանք չկատարվեն։

Սերասկիրի ապարանքը հավիտյան աշխույժ տեսարան եր ներկայացնում։ Այնտեղ, ուր մռայլ փաշան լռելյայն ծխում եր իր կանանց ու անարգ մանկլավիկների շրջանում, այնտեղ նրան հաղթողը սառնում եր զեկույցներ իր գեներալների հաղթությունների մասին, բաժանում եր փաշալիկներ, զրույց եր անում նոր ռոմանների մասին։ Մշտ փաշան յեկել եր կոմս Պասկևիչի մոտ խնդրելու նրանից իր յեղբորորդու տեղը։ Շրջելով ապարանքը, ծանրակշիռ թուրքը կանգ առավ սենյակներից մեկում, աշխուժությամբ ասաց մի քանի խոսք, և հետո մտածմունքի մեջ ընկավ.—այդ նույն սենյակում գլխատված և յեղել նրա հայրը սերասկիրի հրամանով։ Ահա իսկական արևելյան տպավորություններ։ Հռչակավոր Բեյ-Բուլաթը, Կովկասի ահն ու սարսափը, յեկել եր Արզրում չերքեզական այն գյուղերի յերկուավաղների հետ, վորոնք ապստամբվել եյին վերջին պատերազմների ժամանակ։ Նրանք ճաշում եյին կոմս Պասկևիչի մոտ։ Բեյ-Բուլաթը մոտ 35 տարեկան տղամարդ է՝ ցածրահասակ ու լայնաթիկունք։ Նա ռուսերեն չի խոսում, կամ ձևացնում է, թե չի խոսում։ Նրա Արզրում գալն ինձ շատ ուրախացրեց.—այդ արդեն ինձ համար յերաշխիք եր, վոր անվտանգ կարելի կլինի անցնել լեռներն ու Կաբարդան։

Ոսման-Փաշան, վոր գեբի յեր վերցված Արզրումի մոտ և Թիֆլիս եր ուղարկված սերասկիրի հետ, խնդրել եր կոմս Պասկևիչին Արզրումում թողած իր հարեմն անվտանգ պահելու մասին։ Առաջին որերն այդ մասին մոռացել եյին։ Մի անգամ ճաշի ժամանակ, խոսելով մուսուլմանական քաղաքի հանդարտության մասին, վորը գրավված եր 10000 զորքով, և վորի մեջ վոչ մի ընակիչ վոչ մի անգամ չեր դանգատվել զինվորի բռնության մասին, կոմսը մտաբերեց Ոսման-Փաշայի հարեմը և հրամայեց պ. Ա. <բրամովիչին> գնալ փաշայի տունը և հարցնել նրա կանանցից, թե արդյո՞ք գոհ են նրանք և չի՞ յեղել արդյոք վորևե վիրավորանք։ Յես թույլտվություն խնդրեցի ուղեկցել պ. Ա. <բրամովիչին>։ Մենք գնացինք։ Պ. Ա. <բրամովիչը> վերցրեց իր հետ վորպես թարգման մի ռուս սպա, վորի պատմությունը հետաքրքիր է։ 18 տարեկան հասակում նա գերի յեր ընկել պարսիկների մոտ։ Նրան ամորձատել եյին և ավելի քան 20 տարի նա ծառայել եր վորպես ներքինի շահի վորդիներից մեկի հարեմում։ Նա իր դժբախտության մասին, և Պարսկաստանում վարած իր կյանքի մասին պատմում եր սրտաշարժ պարզամտությամբ։ Ֆիզիոլոգիական տեսակետից նրա ցուցմունքները թանգարժեք եյին։

Մենք յեկանք Ոսման-Փաշայի տունը։ Մեզ ներս տարան մի բաց, շատ կարգին, նույնիսկ ճաշակով սարքված սենյակ,—գունավոր լուսամուտների վրա ուրվագծված եյին Ղորանից վերցված մակագրություններ։ Նրանցից մեկն ինձ շատ խորամիտ թվաց մուսուլմանական հարեմի համար.—Քեզ վայել է կապել յով արձակել։ Մեզ մատուցեցին սուրճ պստիկ արծաթապատ թասիկներով։ Մի ծերունի՝ սպիտակ պատկառելի միրուքով, Ոսման-Փաշայի հայրը, յեկավ կանանց անունից շնորհակալություն հայտնելու կոմս Պասկևիչին,բայց Ա. <բրամովիչն> ասաց կարկանապես, վոր նա ուղարկված է Ոսման-Փաշայի կանանց մոտ և ուզում է նրանց տեսնել, վորպեսզի հենց նրանցից հավաստիանա, վոր նրանք ամուսնու բացակայությամբ ամեն բանից գոհ են։ Հազիվ պարսկական դերին կարողացավ այս բոլորը թարգմանել, յերբ ծերունին ի նշան դայրույթի չրթացրեց լեզվով և հայտնեց, վոր վոչ մի կերպ չի կարող համաձայնել մեր պահանջին, և վոր յեթե փաշան, յերբ վերադառնա, իմանա, վոր ոտար աղամարդիկ տեսել են նրա կանանց, ապա և նրա ծերու-

նու, և հարեմի բոլոր ծառաների գլուխը կտրել կտա։—Ծառաները, վորոնց մեջ վոչ մի ներքինի չկար, հաստատեցին ծերունու խոսքերը, բայց պ. Ա. <բրամովիչը> անհոգդողդ ելը։ Դուք վախենում եք ձեր փաշայից,—ասաց նա նրանց, իսկ յես իմ սերասկիրից, և չեմ համարձակվի չանսալ նրա հրամաններին։—Բան չեր մնում անելու։ Մեզ տարան պարտեզով, ուր խփում եյին յերկու վտիտ շատրվաններ։ Մենք մոտեցանք մի փոքրիկ քարե շինությանն։ Ծերունին կանգնեց մեր և դռան միջև, զգուշությամբ այն բաց արեց, ձեռքից բաց չթողնելով դռնափակը, և մենք տեսանք մի կին՝ գլխից մինչև դեղին բաբուճները սպիտակ չադրայով։ Մեր թարգմանը կրկնեց նրա հարցումը.—մենք լսեցինք յոթանասունամյա պառավի սվսվոցը։ Պ. Ա. <բրամովիչը> ընդհատեց նրան.—Սա փաշայի մայրն է, ասաց նա, իսկ յես ուղարկված եմ նրա կանանց մոտ, բերեք նրանցից մեկին։ Բոլորը զարմացան գյավուրների կոահումից, պառավը գնաց և մի բոպեյից վերադարձավ մի կնոջ հետ, վորը ծածկված եր նույնպես, ինչպես և ինքը,—ծածկոցի տակից հնչեց յերիտասարդ հաճելի ձայնիկ։ Նա շնորհակալություն եր հայտնում կոմսին նրա ուշադրության համար —դեպի խեղճ այրիները, և գովում եր ռուսների վարվողությունը։ Պ. Ա <բրամովիչը> վարպետորեն յերկարացրեց խոսակցությունը նրա հետ։ Այդ միջոցին յես, շուրջս նայելիս, հանկարծ տեսա հենց դռան վերևում մի կլոր պատուհան, և այդ կլոր պատուհանում հինգ թե վեց կլոր գլուխներ, սև, հետաքրքրվող աչքերով։ Ցես մի ուզում եյի հաղորդել գյուտիս մասին պ. Ա <բրամովիչին>, բայց գլխիկները նշան արին, աչքով արին, մի քանի մատներ սկսեցին ինձ սպառնալ, վոր յես լռեմ։ Ցես հնազանդվեցի և գյուտիցս բաժին չհանեցի ուրիշին։ Նրանք բոլորն էլ դուրեկան դեմք ունեյին, բայց վոչ մեկն էլ գեղեցկուհի չեր։ Այն մեկը, վոր դռան մոտ խոսում եր պ. [Ա. <բրամովիչի> հետ, յերևի հարեմի վարդ տիրուհին եր, արտերի դանձանոցը—սիրո Վարդը—գոնե, յես այդպես եյի յերևակայում։

Վերջապես պ. <Աբրամովիչը> վերջացրեց իր հարցուփորձը։ Դուռը փակվեց։ Պատուհանի դեմքերն անհետացան։ Մենք դիտեցինք պարտեզը, տունը և վերադարձանք շատ գոհ մեր առաքելությունից։

Այդպիսով յես հարեմ տեսա —դա հաղվադեպ յեվրոպացույ հաջողվել։ Ահա ձեզ մի հիմք արևելյան ռոմանի համար։

Պատերազմը վերջացած էր յերևում։ Ցես պատրաստվում էյի վերադառնալու։ Հուլիսի 14-ին յես գնացի ժողովրդական բաղանիք և արևս խավարեց։ Ցես անիծում էյի սավանների անմաքրությունը, վատ սպասավորու�ն, և այլն։ Ինչպես կարելի յե համեմատել Արզրումի բաղանիքը Թիֆլիսի հետ։

Վերադառնալով ապարանք, յես իմացա պահակում կանգնած կ <ոնոՎնիցինից>, վոր Արզրումում ժանտախտ ե հայտարերվել։ Առաջս իսկույն պատկերացան կարանտինի սարսափները, և յես նույն որը վճռեցի թողնել բանակը։ Ժանտախտի ներկայության մասին մտածելը շատ անախորժ բան ե անսովորությունից։ Ցանկանալով ջնջել այդ տպավորությունը, յես գնացի զբոսնելու շուկան։ Կանգնելով զինագործի կրպակի մոտ, յես սկսեցի դիտել մի ինչ վոր դաշույն, յերբ հանկարծ մեկը խփեց ուսիս։ Ցես յետ նայեցի.—իմ յետևին կանգնած եր մի զարհուրելի աղքատ։ Նա մահու չափ դունատ եր, կարմիր ճըպռոտ աչքերից արտասուք եր հոսում։ Նորից յերևակայությանս մեջ ծագեց ժանտախտը։ Ցես դեն հրեցի աղքատին անասելի զզվանքի զգացմունքով, և վերադարձա տուն զբոսանքիցս շատ զժգոհ։

Հետաքրքրությունը, սակայն, հաղթեց—մյուս որը յես բժշկի հետ գնացի այն ճամբարը, ուր գտնվում էյին ժանտախտավորները։ Ցես չիջա ձիուց և նախազգուշության համար կանգնեցի քամու ուղղությամբ։ Վրանից մեր առաջը դուրս բերին մի հիվանդի. նա չափազանց դունատ եր և յերերում եր հարբածի պես։ Մեկ ուրիշ հիվանդ ընկած եր ուշաթափ։

Դիտելով ժանտախտավորին և խոստանալով խեղճին շուտ ապաքինում, յես ուշադրություն դարձրի այն յերկու թուրքերի վրա, վորոնք նրան դուրս էյին բերում թևերից բռնած, շորերը հանում էյին, շոշափում էյին, կարծես թե ժանտախտը վոչ այլ ինչ է քան հարբուխը։ Խոստովանում եմ, յես ամաչեցի իմ յեվրոպական յերկչոտությունից այդպիսի անտարբերության առկայությամբ և շուտ վերադարձա քաղաք։

Հուլիսի 19-ին կոմս Պասկևիչի մոտ գալով նրան հրաժեշտ տալու, յես գտա նրան խիստ դառնացած վիճակում։ Ստացվել եր վշտալի լուր այն մասին, վոր գեներալ Բուրցովը սպանվել է Բայբուրթի մոտ։ Ախոս յեղավ քաջարի Բուրցովը, բայց այդ դեպքը կարող է կորստաբեր լինել և մեր ամբողջ փոքրաթիվ

զորքի համար, վորը խորն եր անցել ոտար յերկրի մեջ և շրջապատված եր թշնամական ժողովուրդներով, վորոնք պատրաստ եյին ապստամբվել հենց առաջին անհաջողության լուրը ստանալուն պես։ Ուրեմն, պատերազմը վերսկսվում եր։ Կոմսն առաջարկում եր ինձ ականատես լինել հետագա ձեռնարկումներին։ Բայց յես շտապում եյի Ռուսաստան... Կոմսը նվիրեց ինձ ի հիշատակ մի թուրքական թուր։ Յես այն պահում եմ վորպես հիշատակ փայլուն հերոսի հետքով Հայաստանի նվաճված անապատներում կատարած իմ թափառումների։ Նույն որը յես Թողի Արզրումը։

Յես յետ եյի դառնում Թիֆլիս արդեն ինձ ծանոթ ճանապարհով։ Այն վայրերը, վոր դեռ նորերս կենդանացած եյին 15000 զորքի ներկայությամբ, լուռ եյին և տրտում։ Յես անցա Սողանլուղը և հազիվ կարողացա ճանաչել այն տեղը, ուր կանգնած եր ճամբարը։ Դումբիում յես յերեքորյան կարանտին պահեցի։ Նորից տեսա յես Բզովդալը և Թողի սառը Հայաստանի բարձր դաշտավայրերը տոթակեզ Վրաստանի համար։ Թիֆլիս հասա ոգոստոսի 1-ին։ Այստեղ մնացի յես մի քանի որ սիրալիր և ուրախ մարդկանց շրջանում։ Մի քանի յերեկո յես անցկացրի այգիներում վրացական յերաժշտության հնչյուններ և յերգեր լսելով։ Յես շարունակեցի ճանապարհս։ Լեռներն անցնելն ինձ համար նշանակալից եր նրանով, վոր Կոբիի մոտ գիշերը յես փոթորկի տակ ընկա։ Առավոտյան Կազբեկի մոտով անցնելիս, յես տեսա հրաշալի տեսարան։ Սպիտակ, պատառոտված ամպերը անցնում եյին սարի գագաթով, և մեկուսացած վանքը, արևի ճառագայթներով լուսավորված, թվում եր թե մղվելով ամպերից լողում է ոդի մեջ։ Կատաղի հեղեղատը նույնպես ինձ ներկայացավ իր ամբողջ մեծությամբ.—անձրևի ջրերով լցված ձորը գերազանցում եր իր ամեհությամբ նույնիսկ Թերեքին, վորը հենց այդտեղ ահեղորեն մռնչում եր։ Ափերը պատառոտվել եյին. ահագին քարեր տեղահան եյին յեղել ու բռնել հոսանքի առաջը։ Բազմաթիվ ոսեր մշակում եյին ճանապարհը։ Յես անցա հաջողությամբ։ Վերջապես յես դուրս յեկա նեղ կիրճից դեպի մեծ Կաբարդայի լայնարձակ դաշտավայրը։ Վլադիկավկազում յես գտա Դ <որոխովին> և Պ <ուշչինին>։ Յերկուսն ել գնում եյին ջրերը բուժվելու արջավանքում ստացած վերքերից։ Պ <ուշչինի> մոտ սեղանի վրա յես գտա ռուսական ժուրնալներ։ Առաջին հոդվածը,

վոր աչքովս ընկավ իմ յերկերից մեկի քննադատությունն եր։ Նրա մեջ ամեն կերպ հայհոյում եյին ինձ և իմ վոտանավորները։ Յես սկսեցի այն կարդալ բարձրաձայն։ Պ <ուշչինը> կանգնեցրեց ինձ, պահանջելով, վոր յես կարդամ ավելի բարձր միմիկական արվեստով։ Պետք և իմանալ, վոր վերլուծությունը զարդարված եր մեր քննադատության սովորական հերհյուրանքներով.— դա մի խոսակցություն եր տիրացուցի, նշխարագործուհու և տպարանի սրբագրիչի՝ այս փոքրիկ կոմեդիայի Զդրավոմիսլի հետ։ Պ <ուշչինի> պահանջն ինձ այնքան զվարճալի թվաց, վոր ժուրնալի հոդվածի ընթերցմամբ ինձ պատճառած վրդովմունքը, բոլորովին անցավ, և մենք անկեղծ սրտով հոհոացինք։

Այդ եր ինձ տված առաջին վողջույնը սիրեցյալ հայրենիքում։

<1836>

ՀՍՍՌ ԱՌՈՒՄԻՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Թարգմանիչ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Գլխ. խմբագիր՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ
Տիպոգրաֆերը՝ Հ. ՇԱՎԱՐՇԻ
Տեխ. խմբագիր՝ Լ. ՈՂԱՆՅԱՆ
Սրբագրիչներ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 19 նոյեմբ. 1936 թ.,
Ստորագրված է տպագրության 20 դեկտեմբ. 1936 թ.
Գրավիտի լիազոր Ա. 1178
Հրատարակչ. 3942, Գրավիտ 1405,
Տիրաժ 4000։

Գեհերքաի տպարան, Երևան, II Գնունյանցի, № 4.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0004920

ЦЕНА
11
№ 22679
оригинал